№ 183 ՀԻՆԳՇԱԲԹԻ 21 ՕԳՈՍՏՈՍԻ

1914
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ 21 ՕԳՈՍՏՈՍԻ № 183

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 բուբլի. ամսականն 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տէլէֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տէլէֆոն № 67.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Соломоновская ул., № 21.
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Ցայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

1914 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1915 թ. լրիւ վճարած կունենան բաժանորդավճար 10 բուբլին, ԶՐԻԱՐԱՐ կը ստանան հետևեալ 2 գրքերից մէկն ու մէկը. «ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1865—1871 թ.», «ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ» Վրձինի:

**ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՏԱՏՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ**

**ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ**
Վերաքննութիւններն ու նոր-մտկների քննութիւններն սկսվելու են սեպտ. 1-ից:
(Ե.) առ. 788. 2—1

**ԳԻՄՆԱԶԻԱ Վ. Ա. ԼԷՎԱՆԴՈՎՍԿԻԻ**
Գեղական գիմնազիաների իրաւունքներով, երկսեռ աշակերտների համար:
Դուքիբսկայա, 10, սեփ. տուն, տէլէֆ. 752.
Ընդունելութեան քննութիւնները սեպտեմ. 1-ին և 2-ին
Վերաքննութիւնները » 3-ին } առաւ. ժ. 9-ին
Մաղթանք » 5-ին
Դիմողների դիւանատունը բաց է օգոստ. 16-ից առաւ. ժամը 11-ից մինչև յետ. ժ. 2-ը:
(Հ.Հ.) առ. 744. 10—8

Լոյս տեսաւ
ԱՐՇԱԿ ՏԷՐ-ՅՈՎՍԷՓԵԱՆԻ
**Մանկական Երգերի**
Երկրորդ գրքոյկը.
Երգողական նոտաներով: Հայոց դպրոցների համար: Գինն է 35 կոպ.:
Վաճառվում է Թիֆլիսի հայ գրախանութներում:
Հեղինակից ստանալու համար դիմել՝ Էջմիածին, Академія. Преподавателю А. М. Теръ-Осепянцъ.
789. 6—1

**ՊԱՍՏԱՌՆԵՐ**
**ԵՂԲ. ՏԱՐՆՕՊՕԼ**
**ՖԱԲՐԻԿԱՅԻ**
Արժանացած մեծ պարգևի: Վաճառվում են ՌՈՒՍԻՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ բոլոր յայտնի քաղաքներում:
Ֆաբրիկային իսկական գներով:
Պահեստում միշտ կարելի է ձեռք բերել մեծ քանակութեամբ բազմատեսակ պատառներ վերջին ոճով, ինչպէս էժանագիններ, նոյնպէս և թանգարժէքներ: Բացառապէս լրիւ չափսն է 111½ արշ. երկար.:
Սկզբնական նմուշները ուղարկվում են ԶՐԻՒ օտար քաղաքներում:
Բաժանմունքը Թիֆլիսում.
Обои фабрики Вр. Тарнопольскаго. Отдѣленіе въ Тифлисѣ. Голов. пр., № 21. Тел. № 3-55.
(Հ. շ.) առ. 309. 50—37

**ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ**
**ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ**
Ռտիշչեվսկայա 13, տէլէֆոն 4—21.
Ընդունելութիւն թէ կանացի և թէ տղամարդկանց, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով:
Ընդունելութիւն՝ կանացի հիւանդ. ամեն օր՝ ժ. 11—12 առ.:
**Հիւանդանոցի բժիշկները**
Ա. Ա. Յարութիւնեան
Ն. Ն. Վասիլևսկայա
Վ. Ա. Զակրժեվսկի
Ի. Գ. Ալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ա. Բ. Փիշէր
Ս. Պ. Շահպարոնեանց
(Հ.) առ 368. 100—80

**ԲԺԻՇԿ**
**Շուշանիկ Նաբաթեան**
(մանուածք կանանց հիւանդութիւնների եւ մանկաբարձութեան)
վերադառնալով Կովկասի հանքային ջրերից՝ կը վերսկսէ հիւանդների ընդունելութիւնը սեպտեմբերի 10-ից: Հասցէն՝ Սօլոլակ, Ռտիշչեվսկայա փ. № 1. Հեռախօս 10—58.
(Ե.Հ.Կ.) առ. 784. 25—1

**ԲԺԻՇԿ**
**Գ. ՄԱՂԱՔԵԱՆ**
վերադառնալով՝ վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը. Բէբուտովսկայա փ. № 38.
առ. 776. 2—3

## ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 4 ՐՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակագրոշմ: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Խմբագրութեան մէջ պակասում է 1892 թւի «Մշակի» հաւաքածուն: Արդ՝ այն անձը կամ հաստատութիւնը, ով ունի յիշեալ թւի ամբողջական հաւաքածուն և կը զիջի մեզ, ի փոխարէն կը ստանայ «Մշակը» երեք տարի շարունակ:

Ամսիս 18-ի պաստով ուղարկեցինք խմբագրութեան կողմից խոստացված պրէմիան բոլոր մեր այն բաժանորդներին, որոնք լրացնելով բաժանորդավճար 10 բուբլին՝ մինչև օրս չէին ստացել իրանց ուղարկվելիք այդ պրէմիան:

Խնդրվում է այդօրինակ բաժանորդներին՝ պրէմիան ժամանակին չը ստանալու դէպքում անմիջապէս պահանջել տեղական պաստային վարչութիւնից:

## ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ռուսաստանը, Ֆրանսիան, Անգլիան չեն կարող իրանց սուրը պատեանի մէջ դնել, չեն կարող դադարեցնել պատերազմական գործողութիւնները, մինչև որ չը ջախջախեն տիեզերակալութեան տենչով պապակվող տեւտոնական հիդրայի գլուխը:

Կարելի է ասել, որ սկսվել է վիշապազունների պայքար, մինը այն պայքարներից, որ պէտք է յեղաշրջէ աշխարհի դրութիւնը, նոր կարգ և իրաւունք ստեղծէ, բարոյական և իրաւագիտական նոր նորմաներ, միջազգային և միջազգային նոր յարաբերութիւններ հաստատէ:

Եւ ճշմարիտ, եթէ դաշնակից ազգերը—Ռուսաստանը, Ֆրանսիան և Անգլիան—յաղթող հանդիսանան, իսկ այդ յաղթութեան ցանկացողն է ամբողջ քաղաքակիրթ աշխարհը՝ բացի Ռումինիայից և Թուրքիայից, տեսէք ինչ հակայական փոփոխութիւններ տեղի կունենան: Գերմանական խորխորատ և ապարատաւոր պետութիւնը իր ամբարտաւան և վէս կայդերի հետ՝ կը տապալվի, և Գերմանիան կը վերստանայ իր նախկին վիճակը, այն է՝ կը վերածվի փոքրիկ պետութիւնների, իսկ Վիլհէլմը, եթէ միայն ցաւից և վշտից չը մահանայ, կը դառնայ Պրուսիայի թագաւոր: Դանիան յետ կը ստանայ Շլեզվիգ-Հոլշտէյն նահանգները, որ 1864 թ. Պրուսիան անիրաւաբար խլել է նրանից: Ֆրանսիան կը վերստանայ Էլզաս-Լոթարինգիան, որ 1871 թ. խլվեց նրանից: Լեհաստանի նախկին թագաւորութիւնը կը վերականգնվի. Բոհեմիան կը դառնայ անկախ թագաւորութիւն. Բոսնիա-Հերցեգովինան, ինչպէս և Խորվատիան կը միանան Սերբիայի և Չերնոգորիայի հետ. Ունգարիան կը դառնայ հանրապետական կամ անկախ միապետական պետութիւն և Աւստրիան կը չքանայ միանգամայն. քաղաքակիրթ մարդկութեան օրգանիզմի վրա իբրև գանգրէն բուսած Թուրքիան նոյնպէս կանհետանայ հորիզոնից, և նրա լծի տակ հեծեծող ազգերն ու ցեղերը կազատագրվեն. կը լուծվի նաև հայկական հարցը:

Բացի այդ նշանաւոր փոփոխութիւնից՝ Գերմանիայի պարտութիւնը կունենայ այն բարերար հետևանքը, որ միլիտարիզմի ծանր մղձաւանջը կը վերանայ քաղաքակիրթ մարդկութեան սրտից և ազգերի ու երկիրների ոստկալի բեռնը, որ ծանրացել է նրանց մէջքի վրա սոսկալի սպառազինութիւնից, կը թեթևանայ:

Իսկ եթէ, Տէր մի արասցէ, Գերմանիան յաղթող հանդիսանայ, Բէլգիան, Հոլանդիան, Դանիան, Սերբիան և Չեռնոգորիան կը դառնան լոկ գերմանական և աւստրիական նահանգներ, և ամբողջ քաղաքակիրթ աշխարհը կը հեծեծէ տեւտոնական ամբարտաւանութեան, անգթութեան, կոպտութեան և սոսկալի միլիտարիզմի ճնշման ներքոյ:

Սակայն պատերազմական գործողութիւնների ընթացքը ռազմաթեմերի վրա վերջին օրերս այնպիսի կերպարանք է ստացել, որ Աւստրօ-Գերմանիայի պարտութիւնը հաւանական է դարձել: Գերմանիայի ծովային զօրութիւնը համարեա ոչընչացած կարելի է համարել, այն սոսկալի հարուածներից յետոյ, որ հասցրեց նրան բրիտանական նաւատորմիղը, ջրասոյզ անելով նրա մի քանի նշանաւոր կրէյսէրները և գերելով բազմաթիւ՝ 1000-ից աւելի առևտրական նաւերը: Ցամաքի վրա նոյնպէս Գերմանիան, ինչպէս և Աւստրիան, իրանց յուսացած աջողութիւնը չունեն: Սկզբում, երբ ռուսական զօրքերը դեռ չէին կարողացել հաւաքվել, գերմանացիները մտան Ռուսաստանի սահմանները և գրաւեցին մի քանի կէտեր՝ Գալիշ, Կելց, Լօձ և այլն, բայց ռուսական զօրքը շուտով վրա հասաւ և, այժմ վանելով թշնամուն իր երկրից և հալածելով նրան՝ ինքը մտել է Արևելեան Պրուսիա գրաւելով այնպիսի կարևոր կէտեր, ինչպէս Էյդկունէն, Ինստերբուրգ, Տիլզիտ՝ վերևում, և աւելի ստորև Լիկ, Ալլէնշտայն. այժմ ռուսական զօրքը դիմում է դէպի Կեոնիգսբերգ: Բէլգիայումն էլ, որի համարեա ⅓ մասը գերմանացիները գրաւել են, այժմ բաղդը իր երեսը դարձրել է նրանցից, որովհետև բէլգիական զօրքը, որի օգնութեան է հասել անգլիական զօրքը, պաշտպանողական դրութիւնից՝ դիմել է յարձակողականի, և դուրս գալով Անտվերպէնից՝ սկսել է քալել Բրիւսէլի վրա, և, հաւանական է, որ եռ առնի գերմանացիներից իր մայրաքաղաքը:

Ֆրանսիական սահմաններում գերմանական զօրքերը մասնակի աջողութիւն ունեն, և եթէ մի քանի կէտեր ևս գրաւել են, դրա փոխարէն տուել են մեծամեծ զոհեր:

Թէ որքան ծանր է զգում իրան գերմանական կայդերը, այդ երևում է նրանից, որ նա յոյս է դնում նոյնիսկ Թուրքիայի պէս մի երկրի վրա և, խոստանալով նրան ապագայ երևակայական, Ֆրանսիայից առնելի կոնտրիբուցիայի մի քառորդ մասը, դրդում նրան պատերազմ յայտարարել Ռուսաստանին:

Շատ ճիշդ է նկատել անգլիական զօրքերի հրամանատարը, թէ Գերմանիան արագօրէն ընթանում է դէպի ինքնոչնչացումն:

Հ. Առաքելեան

# ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

## ՊԱՏԵՐԱԶՄԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)
19 օգոստոսի

**ԱՐԵՒԵԼԵԱՆ ՌԱԶՄԱԴԱՇՏ**

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Պաշտօնական. Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից: Օգոստոսի 18-ի օրվայ ընթացքում Վարշավայի զինուորական շրջանի հարաւային զօրաճակատին շարունակվեցին յամառ կռիւներ: Աւստրիացիների բոլոր յարձակումները վանվեցին: Մեր աջ թևի վրա մեր յարձակումը ստիպեց աւստրիացիներին հեռանալ, թողնելով մեր ձեռքում 3 թնդանօթ, 10 գնդակացիր և 1000-ից աւելի գերիներ: Աւստրիացիների կորուստները, գերիների տալով, խոշոր են:

Գալիցիայի սահմանները նախ մտած զօրամասերը շարունակեցին աջողութեամբ առաջանալ դէպի Լվով: Հակառակորդը մեր զօրքերի նեղումից ստիպեցաւ նահանջում է: Ձեռք ձգեցինք մի քանի թնդանօթ, գնդակացիրներ և ռազմամթերք: Առաջխաղացութիւնը շարունակվում է:

Առանձնապէս յամառ էր կռիւը Գնեսյայա Լիպա գետին տիրապետելու ժամանակ: Զը նայած որ հակառակորդը գրաւում էր բնական ամուր դիրք, որը, գերի օֆիցէրների ասելով, իրանք աւստրիացիք համարում էին անառիկ, բայց և այնպէս մեր քաջարի զօրքերը վերցրին այդ դիրքը: Հակառակորդը փորձեց յարձակվել մեզ վրա Գալիչի կողմից, բայց այստեղ էլ նա պարտութիւն կրեց և ցիրուցան եղաւ մեծ կորուստներով: Կուռ դաշտում թողվեցին 4800 աւստրիացիների [illegible] զեներալի և շատ զինուորներ: Խլել ենք 32 թնդանօթ, մի դրօշակ և շատ այլներ:

Գերմանական զօրքերի փոխադրութիւնը արևմտեան զօրաճակատից դէպի արևելեան զօրաճակատը շարունակվում է:

**ԱՐԵՒՄՏԵՑԵԱՆ ՌԱԶՄԱԴԱՇՏ**

ՊԱՐԻԶ. — Պաշտօնական. Մեր զօրքերն ստիպմանաբար առաջանում են Լոթարինգիայի Վոգեզների շրջանում, ուր տեղի է ունենում իսկական պաշարողական պատերազմ երկու օր շարունակ:

Մենք Չարդեցինք կրոնպրինցի զօրքը Սպէնկուր-Լանգիոն շրջանում. Նէֆշատոյ գայիզել շրջանում մենք ունեցանք մասնակի պարտութիւն, որը և ստիպեց նահանջել Մասսի ուղղութեամբ:

Ընդհանուր կռիւ տեղի է ունենում այժմ Մասսի և Ռեդելի միջև:

Ֆրանս-անգլիական զօրքերը, ենթարկվելով յարձակման թևով գերադասց թշնամուց Կատօ-Կամբրէ շրջանում, նահանջեցին դէպի հարաւ:

Երեք օր առաջ վճռական ճակատամարտ եղաւ Սենկանտէն-Վերվէն շրջանում. միաժամանակ Գամպէրօն շրջանում մեր աջ թևը վանեց պրուսական պալատական գընդին և տասներորդ զօրաբանակին դէպի Ուազոզ, բայց գերմանացիների աջ թևի աջողութեան պատճառով մենք նահանջեցինք: Մեր զօրքերը իրապէս ոչ մի տեղ չերեվվեցին, զօրքերի ոգին շատ լաւ է: Կը բած կորուստները լրացրին պահեստի զօրքագնդերը:

ՊԱՐԻԶ. — Գերմանական մի ութրօպլան նորից թռիչք կատարեց Պարիզի վրայով:

Զինուորական մինիստրութիւնը յայտնում է երեկ. ժ. 6 ու 45 ր. օգոստոսի 18-ին. «Ընդհանուր դրութիւնը մասամբ միայն փոխվեց Ֆրանսիական զօրքի երկու թևերի վրա: Ձախ թևի վրա գերմանացիք մի քանի առաջ են եկել: Կենտրոնում էական փոփոխութիւններ չեն եղել: Լոթարինգիայում Ֆրանսիական զօրքերը ունեցել են մի քանի մասնակի աջողութիւններ»:

ԱՆՏՎԵՐՊԷՆ.—Լուրերի համաձայն, Պէրօնի շրջակայքում Ֆրանսիայում տեղի ունեցած [illegible] գերազանցութիւնը [illegible] գերմանացիների զօրքերի վրա: Գերմանացիների զօրքերի շարքերից պակասել են 50,000 մարդ: Սոյդ տեղեկութիւններ առ այժմ ստանալ անկարելի է:

ԼՕՆԴՕՆ.—Անտվերպէնից հաղորդում են, որ Բրիւսէլում հանդիստ է: Գերմանացիք շարունակում են նահանջել Բէլգիայից դէպի հիւսիս-արևելք: Գերմանացի զօրքերի թիւը Բրիւսէլում կազմում է ընդամենը 3000 զինուոր:

**ԴԱՇՏԱԴՈՑՆ ԱՐԵՒԵԼՔ**

ՏՕԿԻՕ.—Եապօնացիք Կիաո-Զաոյի մօտերը գրաւեցին գերմանացիներին պատկանող Տայկունդտաու, Շիաոկունդտաու և Զալիէնտաու կղզիները:

ՏՕԿԻՕ.—Եապօնացիք նորից գրաւեցին Գարոլինեան կղզիները: Այժմ Կիաո-Զաոյի բոլոր կղզիները անցել են եապօնացիների ձեռքը: Նրանք հանել են աւելի քան 1000 ական:

## ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
20 օգոստոսի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական. Բարձրագոյն թոյլատրվեց հիւանդ և վիրաւոր զինուորականներին օգնող համառուսական զեմստվոյական միութեան գործունէութիւնը, որ բաղկացած է գլխաւոր, նահանգական և գաւառական մասնաժողովներից: Ներքին գործերի մինիստրը առաջարկեց նահանգապետներին ցոյց տալ հնարաւոր աջակցութիւնը յիշեալ նպատակով հաստատվող նահանգական և գաւառական մասնաժողովներին, նաև այն մասնաւոր անձանց, որոնք գործում են զեմստվոյական միութեան անունից իրանց առաջադրած հայրենասիրական խնդրի իրագործելու ժամանակ:

Երկաթուղիների վարչութիւնը առաջարկեց արքունի և մասնաւոր երկաթուղիների կառավարիչներին՝ կայարանի բուֆէտները նորից կապալով տալու ժամանակ, բուֆէտների հին կապալառուների հետ պայմանագրերը վերանորոգելիս, մի շարք սահմանափակումներ որոշել օղու և ոգելից խմիչքների առուտրի մէջ:

Պետ. Հեռ. Գործ. շարունակ ստանում է տեղեկութիւններ, որ կազմակերպվում են հասարակական օգնութիւններ հիւանդ և վիրաւոր զինուորականների համար:

Թագաւոր Կայսրը բարեհաճեց շնորհակալութիւն յայտնել Ֆայցֆէյնով ընտանիքին 30,000 ր. նուիրաբերելու համար:

ԲԷԼՕՍՏՕԿ.—Գրուսական պատերազմաբեմից բերում են վիրաւորների:

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Գերմանական լրագիրները ընդգծում են ռուսական արտիլերիայի սպանիչ կրակը:

Ժող. լուս. մինիստրը առաջարկեց հոգաբարձուներին՝ միջոցներ ձեռք առնել, որպէսզի այն տեղերում, ուր կրթական հաստատութիւնների շինութիւնները գրաւված են անորոշ ժամանակով պատերազմական ժամանակի պէտքերի համար, միջոցներ ձեռք առնվեն կազմակերպելու աւտուտարանական դասընթացքներ վարձու շինութիւններում, յատկապէս դէպս բարձր դասարանների համար: Այն կրթական շինութիւններում, որոնք գրաւված չեն պատերազմական պէտքերի համար, դասընթացքները անհրաժեշտութեան դէպքում կարող են կատարվել երկու նաւագով, զանազան կրթական հաստատութիւնների աշակերտութեան համար:

ՍՏՕԿՀՕԼՄ.—Լրագիրները հաղորդում են, որ Պետրօգրադում հիմնված՝ վիրաւորներին օգնող շվէդական ընկերութիւնը դիմել է տեղիս բարեգործներին՝ կոչ անելով աջակցել պատերազմի զոհերը պակասեցնելուն: Մամուլը ջերմ պաշտպանութիւն է ցոյց տալիս այդ կոչին:

ՄՕՍԿՎԱ.—Այրվեց Ռուս-Ասիական Ընկերութեան ֆաբրիկան:

## ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)
20 օգոստոսի

ԼՕՆԴՕՆ.—Համայնքներում պալատում անդամներից մի քանիսը խնդրեցին աւելի տեղեկութիւններ տալ պատերազմի մասին և դժգոհութիւն յայտնեցին խիստ ցենզուրայի դէմ: Ուրիշները պաշտպանեցին մամուլի բիւրօյին: Ասկվիթը ասաց, որ կաբինէտի անդամները չափազանց զբաղված են, չէ կարող մամուլի բիւրօն ենթարկել պատասխանատու մինիստրի:

ԼՕՆԴՕՆ.—Ասկվիթի առաջարկութեամբ՝ պալատի նիստերը յետաձգվեցին մինչև օգոստոսի 27-ը: Ծրվելուց առաջ Լլոյդ-Ջորջը յայտնեց, որ կառավարութիւնը վճռել է երկարել մօրատորիումը մինչև սեպտեմբերի 2-ը: Հաստատվեց մի խառն մասնաժողով բոլոր կուսակցութիւնների ներկայացուցիչներից՝ պալատում ստեղծված թիւրիմացութիւնները հարթելու և անհրաժեշտ համաձայնութիւն մշակելու համար:

ԿԱՊԵՏԱՏՈՒՆ.—Ազգաբնակութեան միտինգին միաձայն բանաձև ընդունվեց՝ հաւատարիմ մնալ Մեծ-Բրիտանիային, կազմել 5000 կամաւորներից բաղկացած զօրամաս պատերազմի դաշտ ուղարկելու համար և հիմնել օժանդակիչ ֆոնդ պատերազմական կարիքների համար:

ԹԻՀՐԱՆ.—Պատերազմի սկզբից տեղիս մամուլը մատնանշեց, թէ Պարսկաստանը, որ զօրք չունի, պէտք է մի կողմ մնայ և չօրս կղզի: Այժմ Կիաո-Զաոյի բոլոր կղզիները անցել են եապօնացիների ձեռքը: Նրանք հանել են աւելի քան 1000 ական:

որ նա կարող է չարաչար պատժվել, եթէ խառնվէ համաշխարհային պատերազմին։ Վերջին օրերը օրչափով ուժեղանում էր Թիւրքիայի ռազմականութիւնը, այնքան էլ ուժեղանում էին գերմանական և աւստրիական մխիթարների գործակալների տարածած սուտ լուրերը, թէ Ռուսաստանը կատաբեալ պարտութիւն է կրել։ Բէյտէրի գործակալութեան տեղեկութիւնները համաբաւ են յերիւրանք անգլիացիներից՝ յանուն Հընդկաստանի խաղաղութեան Շուկայում խօսում էին, թէ իբր Պարիզը շրջապատված է գերմանացիներից և Թիւրքերն Ատրպատականի վրայով յարձակվում են Ռուսաստանի վրա։ Սակայն մեր դեսպանին ընդունելու ժամանակ ականաւոր պարսիկներ պնդում էին, թէ կասկածում են, որպէսզի Թիւրքիան ստորագրէ իր մահվան դատավճիռը, և ասում էին որ Թիւրքիայի բաժանելուց անվնասելուց կարող է շահել Պարսկաստանը։

ՍԱԼՈՆԻԿ. — Արտասահմանից գալիս են հաղարաւոր ռուս-ճանապարհորդներ, որոնք սաստիկ կարիքի մէջ են, որովհետև պատերազմի պատճառով չեն կարողացել փոխանակելու նրանք ամեն օր գիմում են երկաթուղով ու ծովով Ռուսաստան։

«Մէսաժէրի-Մարիտիմ» վերսկսից նաւարկութիւնը Օդեսայի հետ։

ՏՈԿԻՕ.—Ռուսաց, Ֆրանսիական և անգլիական դեսպանատների շինութիւնների առաջ տեղի են ունենում ցոյցեր։ Ժողովրդի ամբոխները երթ են կազմակերպում լատերներով ու աղջնակում են Գերմանիայի դէմ յայտարարված պատերազմը։ Ռուսաց դեսպանի ներկայութեամբ երգվում է ռուսական ազգային օրհներգը։

ԿՈՊԷՆՀԱԳԷՆ. — Կենսական մթերքների գները Դանիայի քաղաքներում և համայնքներում չը բարձրացնելու համար հիմնված են մասնաժողովներ՝ գները որոշելու համար։ Կոպէնհագէնում և շրջակայքում հացահատիկի պաշարները յարքունիս են գրաված։

Արտաքին գործերի մինիստրութիւնը խորհուրդ է տալիս Շվէդիա մեկնողներին անցագրեր ունենալ։

ԿՈՊԷՆՀԱԳԷՆ.—Ստոքհոլմի գործակալութիւնը հաղորդում է, որ մահմեդականները և Վալոնի ազգաբնակութիւնը միացան, ծածանելով կարմիր-սև դրօշակ։ Այսօր ապստամբները մտնում են քաղաք իբրև բարեկամներ։ Յայտարարելով պրինց Վիդին և նրա կառավարութիւնը տապալված՝ Վալոնի երևելիները ընդհանուր խանդավառութեամբ յափշտակեցին իշխանութիւնը։

ՀՌՈՄ.—Երեկ. ժամը 5-ին Վատիկան եկան բոլոր կարդինալները։ Ժողովվելով Պաուլինեան կապելլայում, նրանք հանդիսաւորապէս երգեցին «Վէնի-Կրէատօր» աղօթքը, յետոյ հանդիսաւոր թափորով դիմեցին Բէշիա դահլիճը և մտան Սիքստինեան կապելլան, որ յատկացված է ընտրողական դահլիճի համար։ Այստեղ կարդինալները գրաւեցին իրանց տեղերը ըստ աւագութեան ու հանդիսաւոր երդում տուին։ Ապա կայացան մի քանի ձեւականութիւններ։ Բոլոր հեռագրալարերը դրսի աշխարհի հետ կտրված էին։

—

(Լրագիրներից)

«Օկէանիկ» հակայ շոգենաւով Անգլիա փոխադրվեց Ամերիկայից 75 միլիոն ռուբ.։

Երբ շոգենաւը հեռանում էր Նիւ-Յորքից, պատերազմ դեռ չը կար։ Ճանապարհին անթել հեռագրով իմացվեց պատերազմի յայտարարութեան մասին։ Նաւապետը իսկոյն կարգադրեց հանգցնել բոլոր ազդանշան ճրագները։ Շոգենաւում կային անգլիացիներ, գերմանացիներ և աւստրիացիներ։ Վերջինները իրանց կօրէկտ էին պահում և նաւապետի կարգադրութեամբ նոյնպէս հանգցրին իրանց սենեակների ճրագները։

Արագ գնալով և նաւապետի ձեռք առած նախազգուշական միջոցներով շոգենաւն ազատվեց։

Պարզվեց, որ նախազգուշութիւնը այնքան էլ աւելորդ չէր։ «Օկէանիկին» հետապնդում էր գերմանական «Դրէզդէն» յածանաւը։

## ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

(Պետ. Հնո. Դորձ.)

20 օգոստոսի

ՕԴԵՍՍԱ.—Կ. Պոլսից հաղորդում են, որ Թիւրքաց զօրահաւաքը շարունակվում է տենդային աճապարանքով։ Գալիս են գերմանացի-մասնագէտների և զինուորների նորանոր խմբեր, բերվում են գերմանական թնդանօթներ և ռազմամթերք։ Սակայն հասարակութեան մէջ աճում է խիստ չէզոքութեան կողմնակից հոսանքը, որովհետև Էնվէր-փաշայի քաղաքականութիւնը կարող է կորստեան դուռը հասցնել Թիւրքական պետութիւնը։ Ռուսական և Ֆրանսիական սահմաններից ստացվող տեղեկութիւնները ցէնզուրայի պատճառով փոփոխվում են գերմանացիների մեծամեծ յաղթութիւնների մասով։ Ռուսաստանը և Ֆրանսիան ցոյց են տրվում կորած երկիրներ։ Թիւրքիայի դիրքը վերջնականապէս կորոշվի Թալէաթ-բէյի վերադարձից յետոյ Բուխարեստից, ուր շարունակվում են բանակցութիւնները Մումինիայի և Ծունաստանի հետ։

ՍԱԼՈՆԻԿ.—Ծունաց նաւատորմը՝ բաղկացած 12 թեթև ռազմանաւից՝ մեկնեց Դարդանելի ուղղութեամբ։

Հին Ծունաստանից գալիս են զօրքեր։ բերվում են փամփուշտներ և ռազմամթերք, օրէ-ցօր սպասվում է, որ Թիւրքիան պատերազմ յայտարարէ։

Շոգենաւերով տեղ են եկան յոյն փախստականներ, որոնց հալածում են Թիւրքերը Մարմարա ծովի ափերին։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Թիւրքիայի Տրապիզոնի վիլայէթը յայտարարված է խոլերայից անբարեյաջող։

—

(Լրագիրներից)

✦ Մոսկվայում տեղեկութիւն է ստացվել, որ քիւրդերը Հայաստանում սկսել են իրանց ոստոստակումները։ Հայ ազգաբնակութիւնը ահաբեկված լեռներն է փախչում։ Քիւրդերը ասում են, որ նրանք մինչև պատերազմը կոտորելու են ողջ ազգաբնակութիւնը։

✦ «Рус. Вѣд.»-ում կարդում ենք.

«Թիւրքիայից ստացվող տեղեկութիւնները կրում են յուզալի բնոյթ։ Կառավարութիւնը տենդային գործունէութիւն է ցոյց տալիս կենտրոնացնելու զէնքի կանչված ոյժերը զանազան կէտերում, ռազմի վիճակում դնելու նաւատորմը և այլն, և այլն։ Կասկած չը կայ, որ Թիւրքիայի ագրեսիվ մտադրութիւնները ուղղված են գլխաւորապէս ընդդէմ Ռուսաստանի։ Քիւսի և Միտիլէնի ցոյսը չը լուծված հարցերը ստիպում են ենթադրել, որ հարուածը պատրաստվում է միաժամանակ և Ծունաստանի դէմ։ Այդ տեղեկութիւնը հաստատութիւն է գտնում այն հանգամանքում, որ Ծունաստանը իր հերթին մի շարք ռազմի և նախապատրաստական պատրաստութիւնների մէջ է։ Թիւրքիան արդէն մեծաքանակ գնդեր է ուղարկել Թրակիա, իսկ Ծունաստանը ահկաներ է դրել Սալոնիկի ծոցի մուտքի մօտ և ամրացնում է ափերը։ Եթէ ուշադրութեան առնենք, որ Ռումինիայում ևս յամառ պահանջ է լսվում խառնվել եւրոպական պատերազմին, այն ժամանակ ընդհանուր դրութիւնը Բալկաններում չէ կարող լուրջ երկիւղ չը ներշնչելը։

✦ Հեղինակաւոր աղբիւրներից հաղորդում են, որ Բոլգարիայի վրայով կ. Պոլիս են անցել 100 գերմանացի նաւաստի, 30 գերմանացի օֆիցէր և մի ինժեներ-մեքենագործ։

✦ Կ. Պոլսում կայացաւ ռուս-Թիւրքական կոմիսիայի նիստը՝ պարզելու համար Թիւրքիայի վերաբերմունքը դէպի Ռուսաստանը և Թիւրքիայում ռուսների դրութիւնը։

✦ Նախագահ Իզզէտ-բէյը ասաց, որ զօրահաւաքը ագրեսիվ բնոյթ չունի, ձեռնարկված է Բալկանների բարդութիւնները խափանելու համար։ 40-ամեայ բարեկամութիւնը Ռուսաստանի հետ չի խախտվի ռազմասէր մարդկանց քմահաճոյքից։ խոհուն մասը թոյլ չի տայ խզել յարաբերութիւնները Ռուսաստանի հետ։

✦ Սեվաստոպոլից տեղեկացնում են, որ Ղրիմի բոլոր քաղաքներից Թիւրքերը, կիսագին ծախելով իրանց գոյքերը, գլուխները առնում փախչում են Թիւրքիա։ Ղրիմում բնակվում են մօտ 30,000 Թիւրք։

✦ Կ. Պոլսից հեռագրում են, որ անգլիացի ծովակալ Լիմպուսը վերջնականապէս հեռացվեց Թիւրքաց նաւատորմի հրամանատարի պաշտօնից։

✦ «Н. В.»-ի տեղեկութիւնների համաձայն, Զաթալջայի մօտերը, Սկիւտարից դէպի արևելք, Բօղոստոյի մօտերը և այլ տեղերում, նաև Սև-ծովի ափերին կառուցվում են բերդեր։

✦ Ադրիանուպոլսում Թիւրք զինուորները, կողոպուտից յետոյ, հրդեհել են 4 եկեղեցի և 1500 տուն։

✦ «Н. В.»-ին Օդեսայից տեղեկացնում են, որ լոյս օգոստոսի 15-ի գիշերը Կ. Պոլսում նկատվել է զօրքերի անսովոր տեղաշարժութիւն երկու ուղղութեամբ՝ դէպի Ադրիանուպոլիս և դէպի Տրապիզոն։

✦ Պետրօգրադից հեռագրում են, որ Թիւրքիայի և Գերմանիայի յարաբերութիւնները իբր թէ լարվել են։ Թիւրքերի մեծ ոյժեր կենտրոնացել են Զմիւռնիայում։ Մօտիկ օրերում ապասվում է, որ դիւանագիտական կապերը երկու բարեկամ պետութիւնների միջև խզվեն, որից կօգտվի ի հարկէ երրորդ համաձայնութիւնը։

✦ Կ. Պոլսի «Սաբահը» գրում է, որ Թիւրքաց գեներալ-Զէլալ-փաշան, չը նայած որ յայտարարված էր գրաւել ձիերը զօրքի համար, թագցրեց իր ձիերը և յետոյ վաճառեց մի ռուսի։ Ձիերը խլվել են, իսկ ինքը փաշան բանտարկվել է։

✦ Կ. Պոլսից հեռագրում են, որ Էնվէր-փաշան կոչ է հրատարակել, որի մէջ ասում է, թէ Թիւրք զօրքը պէտք է այժմ ամենամեծ զոհաբերութիւնների դիմէ և այդպիսով մաքրէ այն սև բիծը, որ ընկած է նրա վրա բալկանեան վերջին պատերազմից յետոյ։

## ՊԱՏԵՐԱԶՄԻ ԾՈՒՐՔԸ

✦ Շարլրուայի կուռ մանրամասնութիւնների վերաբերմամբ հաղորդում են, որ քաղաքը ձեռքից ձեռք անցաւ հինգ անգամ։ Սոսկալի վնասներ պատճառեց տների տանիքների վրա դրված գնդակացիրների կրակը։ Գերմանական և Ֆրանսիական գընդակացիրները այնքան մեծ թիւով մարդիկ սպանեցին, որ զօրքերը յարձակվելիս անցնում էին դիակների կոյտերի վրայով։ Ֆրանսիացիք կարող եղան վերջնական գրոհի դիմել շնորհիւ անգլիական զօրաբանակի, որ կանգնած էր ժայռի նման իր տեղում, ինչպէս նաև շնորհիւ աֆրիկական կարիճների, որոնք առիւծի նման յարձակվեցին գերմանացիների թնդանօթաձիգ զինուորների վրա և ստիպեցին նրանց սարսափահար փախչել։

✦ «Times»-ը հաշուում է, որ Բէլգիայում կուռ կողմերը կորցրել են 120,000 մարդ։

✦ Շարլրուայի կուռում վիրաւորվել է Վիլհելմ կայսրի երկրորդ որդին՝ Ադալբերտը։

✦ Գերմանացիք վճռական յարձակման են դիմել Բէլգիայում։

✦ Ունգարական սոց.-դեմ. պարպլու�-ները կոմիտէների միջոցներից 800,000 կռոն նուիրեցին պատերազմի համար։ Ունգար բանուորները այդ առիթով բողոքում են։

✦ Ռուսաց դիւանագիտական շրջաններում խօսում են, որ Գերմանիայի և Աւստրիայի միջև Թիւրիմացութիւններ են ծագել։ Երբ Գերմանիան պահանջեց Աւստրիայից իր զօրքերն ևս ուղարկել Ֆրանսիական սահմանը, Աւստրիան պատասխանել է, թէ իր բանը առանց այն էլ լաւ չէ սերբերի դէմ։

✦ Կարլսբատում գերվել են Պետ. Խորհրդի անդամ Կովալէվսկին և յայտնի փասաբան Կոլմանովիչը։

✦ Իտալացի յայտնի Ֆուտուրիստ Մարինէտատն կամաւոր զինուոր է դարձել և մեկնել Ֆրանսիա։

✦ Իտալիայի ակտիվ հանդէս գալու մասին այլևս չէ կասկածվում։ Ամեն կարիւր պատրաստութիւնը Իտալիայի կողմից տեսնված է։

✦ Վիլհելմը ընդունեց Բերլինում հրաժեշտի ունկնդրութեան անգլիական դեսպանին, և երբ խօսակցութիւնը տաքացաւ, զայրացած կայսրը պոկեց իր վրայից հրամանագրի վրա կարված բոլոր անգլիական շքանշանները և, շպրտելով այդ ամենը վառարան, ասաց. «Այսպէս եմ վարվում ես անգլիական թագաւորի շքանշանների հետ։ Այժմ կարող էք մեկնել Լօնդոն և զեկուցել այդ մասին»։

✦ Բուխարէստից «Б. В.»-ին տեղեկացնում են, որ եթէ փորձ լինի խախտել Ռումինիայի չէզոքութիւնը յօգուտ Գերմանիայի և Աւստրիայի, այն ժամանակ յեղափոխութիւնը երկրում անխուսափելի է։ Համարեա ամբողջ ռումինական զօրքը կազմպատրաստ է։ Նրա խոշոր մասն ուղարկված է սահմանները, ուր կուռ կողմերը մտել են ռումինական հողը 3 կիլոմետր տարածութեամբ։ Լուրերի համաձայն, դիւաւոր բանակատեղին լինելու է Ֆոկշանում։ Կարպատի մօտերը աւստրիացիք են ամրացնում։

✦ Միացեալ Պետութիւնների կառավարութիւնը որոշել է երկար հանդիսատես չը մնալ համաեւրոպական պատերազմին, որովհետև արտահանութիւնը սաստիկ պակասել է, սկսվում է գործազրկութիւն, անկարգութիւնները գլուխ են բարձրացնում։

✦ «Berl. Tageblatt»-ը խոստովանում է, որ ռուս կօզակները ձեռք չեն տալիս խաղաղ ազգաբնակութեանը։

✦ Լուրերի համաձայն, Ֆինլանդական ջրերում ջրասոյզ է տրված գերմանական մի յածանաւ։

✦ Վիլհելմ կայսրը նորից փորձեց համոզելու Շվէդիային խառնվել պատերազմին ակտիվ կերպով։ Պատասխանը բացասական եղաւ։

✦ Ռուսաց գործող բանակում լոյս է տեսնում պաշտօնական «Армейскій Вѣстникъ» թերթը։

✦ Գերմանացիք խոշոր ոյժեր կենտրոնացրին անգլիացիների դէմ, մի հարուածով նրանց ջարդելու մտադրութեամբ, բայց այդ ջանքը ապարդիւն անցաւ։

✦ Բերլինում սովի ուրուականը առաջ է բերել անասելի երկիւղ։ Օր աւուր գործազրկութիւնը գլուխ է բարձրացնում։

✦ Զինական կառավարութիւնը խնդրեց Ամերիկայից իր պաշտպանութեան ներքոյ առնել Չինաստանի չէզոքութիւնը։

✦ «Б. В.»-ն լսել է, որ Վիլհելմ կայսրը գալիս է արևելեան ռազմաճակատը, անձամբ ղեկավարելու պատերազմական գործողութիւնները ռուսների դէմ։

✦ Ֆրանսիան խոշոր ոյժեր է կենտրոնացրել Բէլգիա-Արաս ռազմագիծը գերմանացիներից պաշտպանելու համար։

## ՎԻՐԱՒՈՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

—

Վիրաւորված մի ռուս պրապորշչիկ հետևեալ պատմութիւնն է անում գերմանացիների հետ ունեցած ընդհարման մասին։

— Դուրս եկանք մենք,—ասում է նա,—արևածագից առաջ, յուլիսի 29-ի օրը, և անցանք սահմանը ու, թշնամու չը հանդիպելով, առաջացանք դէպի թշնամու երկրի խորքը։

Ճանապարհը դժուարին էր։

Թշնամին շատ տեղեր խճուղիները կտրել էր խոր փոսերով և այդտեղ էլ ամրացրել էր երկաթթելերի ցանկապատերով։

Ընդհանրապէս գերմանացիները մեծ չափով օգտվում են երկաթթելերի ցանկապատերով։

Այն բոլոր գիւղերը, որոնց միջով մենք առիթ ունեցանք անցնելու, դժուար անցանելի էին հենց այդ երկաթթելերի պատճառով։ Նրանով փակված են գրեթէ բոլոր փողոցները։

Մի հետաքրքրական մանրամասնութիւն ևս։

Սովորաբար, երբ մեր առաջապահ գնդերը մօտենում են գերմանական գիւղերին, անտերից սկսվում են հրացանաձգութիւն։ Յետոյ՝ շատ դէպքերում պարզվում է, որ հրացան արձակողը բնակիչներն են, որովհետև ցանկանում են, ըստ երևոյթին, մեզ վախեցնել այն ենթադրութեամբ, որ գիւղում զինուորական մեծ ոյժ է կանգնած։

Սկզբում մենք, իսկապէս, զգուշութեամբ էինք մօտենում գիւղերին, բայց յետոյ սովորեցինք և ոչ մի հրացանաձգութեան վրա ուշադրութիւն չէինք դարձնում։

Այն օրը, որի մասին ես պատմում եմ, մենք սահմանից անցանք 20 վերստ, երբ, վերջապէս, մեր հակիչները ընդհարվեցին թշնամու հետ։

Նրանց ասելով, մեր առջև եղել է գերմանական հետևակ գունդը։

Մենք իսկոյն շղթայ կազմեցինք և շտապեցինք յարձակում գործել։

Գերմանացիները գնդակացիրներից կրակ արձակեցին։

Մեր գնդացիրները պատասխանեցին։

Հրացանաձգութիւնը թշնամու կողմից շուտով դադարեց։

Մենք առաջ խաղացինք։

Հինգ վերստ ևս անցնելով, մենք նորից նկատեցինք թշնամուն մեր թևի վրա։

Գերմանացիները իսկոյն կրակ բաց արին։

Շուտով, մեր ճակատի կողմից երևաց գերմանական ուժեղ հետևակ գունդը թընդանօթաձիգների հետ միասին։

Մենք անցանք բլուրի հակը և շղթայ կազմած պատկեցինք։ Այդ ժամանակ գործի ձեռնարկեց և մեր արտիլէրիան։

Գերմանական արտիլէրիան պատասխանում էր, բայց ոչ մի կերպ չէր կարողանում մեզ զարկել։ ռումբերը մեր թեռ էին թռչում, մերթ մեզ չէին հասնում և ընկնում էին մեզանից շատ հեռու։ Զը նայած ոյժերի ակնյայտնի գերազանցութեան, գերմանացիները ոչ մի անգամ չը վատահացան յարձակման անցնել։

Նրանց հետևակը ընդհանրապէս օգտվում է հնացած ձևերով։ Առաջապահությունն էլ կատարվում է խիտ շարքերով և ոչ թէ շղթաներով։ Փոխանակ զօրքը ճակատամարտի համար լայն-ընդարձակ փռվելու, նրանք գերադասում են խմբվել որոշ տեղեր։

Նոյն ձևն է պահպանում և հեծելազունդը։

Ես ոչ մի անգամ չը տեսայ, որ նրանց ուլանները նահանջէին ցրիւ խմբերով։ Միշտ փախչում են խմբերով, որով և նրանց վրա կրակ արձակելը հեշտ է, և նրանք մեծ կորուստներ են ունենում։

Շրջահայեցութեան համար նրանց ամենանախընտրելի միջոցն է՝ ծառը բարձրանալ։

Մեր կօզակները նրանց այնտեղից ցած են բերում շատ հեշտ կերպով՝ ցցերի վրա նստեցնելով։

Գերմանացիները կօզակներից վախենում են, ինչպէս կրակից։

Մեր կռիւը գերմանական հետևակի հետ տևեց մի քանի ժամ։

Երբ հետախուզութեան գործը վերջացաւ, մենք մօտեցանք մեր գլխաւոր ոյժերին։ Հէնց այդ վերադարձի միջոցին ինձ վիրաւորեցին, և ես աչքս բաց արի միայն հիւանդանոցում։

Գերմանական զօրքերի մասին մեծ կարծիք չունեն և մեր հետևակները։

Նրանց ասելով, գերմանացիները չափազանց վախկոտ են, կրակում են վատ և, չը նայած իրանց հրամանատարների հրամաններին, յարձակման չեն դիմում։ («Р. Сл.»)

## ԿՈՉ ԲՈԼԳԱՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ.

—

Այս օրերս, ինչպէս «Б. М.» թերթն է հաղորդում, Կիէվում բնակվող բոլգարները դիմել են բոլգարական ժողովրդին հետևեալ կոչով.

«Հասել է մեծ ժամը, երբ վճռվում է ժողովուրդների ճակատագիրը։ Այսպիսի բոպէներին որևէ պետութեան կրաւորականութիւնը անտանելի է։ Ում համար թանգ են ազգային, ցեղային և համամարդկային շահերը, նա պէտք է հուն մասնակցութիւն ցոյց տայ այս վճռական պայքարի մէջ։

# ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Յինկ. Սողոմոնեան և Սիւրմեան.

«Բոլգարներ, մենք ներկայ ենք խաղաղ անցքի, որը մարդկութիւնը ապրում է իր գոյութեան ընթացքում՝ կեանքի և մահու, սլաւոնականութեան ու տեւտոնների զինված պայքարի ընթացքում։ Մեզ յայտնի է, որ գերմանացիները 40 տարվայ ընթացքում ոչինչ չեն խնայել՝ բարոյական ու նիւթական միջոցներ՝ ոչ թէ համամարդկային կուլտուրայի համար, այլ իրանց հրէշային ակը իրագործելու, այն է՝ սլաւոնականութիւնը ջնջելու։ Այդ բանին առիթ չը լինելով, այլ միայն տարված համաշխարհային աշխարհակալ լինելու զառանցանքով՝ նրանք, տեւտոնները, պատերազմ յայտարարեցին բոլոր խաղաղ, կուլտուրական ժողովուրդներին և անխնայօրէն ոչնչացնում են այն ամենը, ինչ-որ գերմանական չէ, միայն թէ իրագործեն իրանց դժոխային երազը։ Բայց մեծ է սլաւոնականութեան Աստուածը։ Մեր աչքի առջև միացան ռուսները, լեհերը, չեխերը, չերնոգորցիները։ Տարված մի գաղափարով, լցված մի ոգով և ոգեորված մի յոյսով՝ նրանք զէնք վերցրին և վճռեցին աւելի շուտ մեռնել, քան թոյլ տալ, որ ընկնի իրանց պատիւը, արժանապատուութիւնը և կուլտուրական դիրքը։ Մեծ սլաւոնականութեան ընտանիքի անդամները արդէն 20 օր է զէնքը ձեռներին իրանց դիրքերում յետ են մղում գերմանական զրահաւորված բռունցքը։ Եւ սլաւոնական այս հպարտ քաջերի պարզ գիտակցութեան մէջ մութ կերպով ալիքանման այն միտքն է անցնում, թէ ուր է Բոլգարիան, ինչ է անում նա, ինչու է տատանվում։

«Բոլգարներ, բաւական է տատանվել,— հրամայողական ձայնով առում է ձեզ այս երկու թւականը.—1878 թ. փետրվարի 19-ի Սան-Ստեֆանոյեան Բոլգարիան, որ ստեղծվեց բոլգարական դաշտերում Ռուսաստանի 200,000 որդիների ոսկորների վրա, և նոյն ամսի 24-ի Բոլգարիան, որ կարտվեց, բաժան-բաժան արվեց, ստորացվեց Բերլինի և Վիեննայի դիպլոմատիայի կողմից։

«Առաջին թւականը կանչում է մեզ դէպի մեր թանգագին եղբայր ազատարարները՝ դէպի ռուսները, երկրորդը—մեզ ստորացնող գերմանացիների դէմ։ Եւ եթէ մեր կեանքում կան տակաւին չը բուժված վէրքեր, թող ուրեմն մենք ամենքս համոզված լինենք, որ սլաւոնականութեան յաղթանակը, որը մենք պէտք է իրագործենք, կը բուժի ամենը և ընդմիշտ։

«Մի կողմ երկպառակութիւնները, մի կողմ կուսակցական տարաձայնութիւնները, մանր անձնական հաշիւները։ Մեծագոյն ժամի հանդէպ մեծ լինենք և մենք։ Դէպի այդ մեծութիւնը կանչում է մեզ կուռ սլաւոնականութեան հզօր ձայնը, և մենք պարտաւոր ենք դրան արձագանք տալ։

«Մենք, Կիէվում ապրող բոլգարներս, ականատես լինելով սլաւոնականութեան ոգու մեծագոյն բարձրացման, լցված բոպէի կարևորութեամբ և խորապէս հաւատացած սլաւոնականութեան ճշմարտութեան և այժի յաղթանակին,—դիմում ենք ձեզ՝ հայրեր, եղբայրներ, քոյրեր և բոլոր քաջ բոլգարներդ, որոնց երակներում սլաւոնական արիւն է հոսում, և խնդրում ենք ձեզ, առանց որևէ տատանումի ականջ դնել ձեր սրտի ձայնին և ճանապարհ ընկնել, որը ցոյց է տալիս ձեզ պարտականութիւնը և սլաւոնականութիւնը։ Զը մոռանաք, որ մի ժամանակ դանդաղումը նախատինք կը բերի մեզ։ հանդէս գանք մենք ժամ առաջ և մեր բաժինը կը լինի մեծ և յաւիտենական փառքը։»

Կիէվի բոլգարական գաղութի ժողովը այս կոչը քննելուց յետոյ ողջոյնի հեռագիր ուղարկեց բոլգարական ընդդիմադիր կուսակցութիւնների պարագուխներին՝ Մալինովին, Սակիզովին, Ցանովին, Ստամբոլսկիին, Դանեվին և Գէչովին։

Հեռագրի բովանդակութիւնը հետևեալն է. «Ընդունեցէք մեր ջերմ ողջոյնը այն յամառ և արդար պայքարի համար, որ դուք մղում էք անձնական ըմբիռի՝ հակասլաւոնական-հակաազգային քաղաքականութեան դէմ։ Յառաջ. մեզ հետ է ժողովուրդը և արդարութիւնը։ Կիէվի բոլգարներ»։

## ՎԻՀԵԼՄԻ ԵՐԿՐՈՐԴ ՊՐՕԿԼԱՄԱՑԻԱՆ

Բերլինից մեկնելուց առաջ Վիլհելմ II-ը հրատարակել է մի նոր կոչ իր ժողովրդին, որի մէջ նա շարունակում է պնդել այն բանի վրա, որ բոլոր ժողովուրդները դաւաճանօրէն յարձակվեցին Գերմանիայի վրա։

«Մեր կայսրութեան հիմնաւորութեան օրից, 43 տարվայ ընթացքում, իմ նախորդների մշտական ջանքերի ողջ նպատակը, որը պահպանում էի և ես, կայանում էր եւրոպական խաղաղութեանը աջակցելու ձգտման և մեր ողջ այժերը երկրի մտաւորական զարգացման նուիրելու մէջ։

«Բայց մեր թշնամիները դուրս եկան նախանձոտներ և չը կարողացան ներել մեզ մեր աջողութիւնները այդ ասպարիզում։

«Ինչպէս արևելքում, նոյնպէս և արևմուտքում մենք մեր ճանապարհին հանդիպեցինք թաքնված նախանձի, որը ձգվում է անդամ և մեզ շրջապատող ծովերի այն կողմը։

«Մինչև այժմ, սակայն, գիտակցելով մեր պատասխանատուութիւնը և կարողութիւնը, մենք հանդուրժեցինք այդ արհամարհանքին։

«Այժմ էլ մեր թշնամիները կամենում են ստորացնել մեզ և մեզանից պահանջում են, որպէս զի մենք հանդիսատ, ձեռքներս ծալած նայենք այն բանին, թէ ինչպէս թշնամին պատրաստվում է վճռական հարուած հասցնել մեզ։

«Ներանք թոյլ չեն տալիս, որպէս զի մենք հաւատարիմ մնանք մեր՝ Աւստրո-Ունգարիայի հետ ունեցած դաշնակցութեան, Աւստրո-Ունգարիայի, որը պատով պաշտպանում է իր մեծ պետութեան դիրքը։ Նրա ստորացումը մեզ համար կը հանդիսանար մեր հզօրութեան և պատուի կորուստ։

«Այժմ խօսքը պատկանում է զէնքին, և նա կը վճռի՝ ով է մեղաւոր և ով արդար։

«Դէպի զէնք, պարոնայք!

«Ամէն տեսակ դանդաղում և տատանում հաւասարազօր է հայրենիքի դաւաճանութեան։ «Լինե՞լ թէ չը լինել»—ահա այն հարցը, որ կանգնած է կայսրութեան առջև, այն կայսրութեան, որը ստեղծվել է մեր հայրերի ջանքերով։ լինե՞լ թէ չը լինել գերմանական հզօրութեանը, գերմանական կայսրութեանը!

«Մենք պէտք է կանենք մինչև վերջին հնարաւորութիւնը, մինչև այն ժամանակ, երբ դեռ կենդանի կը լինի վերջին գերմանացին և վերջին ձին։ և մենք կռիւ ենք ձեռնարկում ամբողջ աշխարհի մեր թշնամիների դէմ։ Միայն Գերմանիային դեռ ոչ ոք չէ յաղթել։ Յառաջ, և մեզ հետ է Աստուած այնպէս, ինչպէս Նա եղել է մեր նախորդների հետ»։

## ՄԻ ԷՋ ՉԵԽԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

I

Աւստրո-սերբիական պատերազմը սկսելուց ի վեր լրագիրների մէջ շարունակ լոյս են տեսնում տեղեկութիւններ չեխերի մասին, թէ նրանց, որոնք բնակվում են իրանց հայրենիքում, և թէ նրանց, որոնք գտնվում են իրանց մայրենի երկրի սահմաններից դուրս, մանաւանդ Ռուսաստանում։ «Մշակի» № 180-ի մէջ կար ի միջի այլոց նաև «Չեխերի կոչը»։

Ահա այդ չեխերի մասին մենք կամենում ենք «Մշակի» ընթերցողներին տալ մի քանի հակիրճ պատմական տեղեկութիւններ։

Չեխիան կամ Բոհեմիան մի փոքրիկ երկիր է, մօտաւորապէս Անդրկովկասի կէսին չափ, որ ընկած է Գերմանիայի և բուն Աւստրիայի միջև, ենթակայ այս վերջինիս գերիշխանութեան։ Չեխիան կազմում է մի փոխարքայութիւն և ունի որոշ արտօնութիւններ, որոնցից զուրկ են Աւստրիայի ուրիշ նահանգները։ Այդ երկրի այժմեան բուն ընակիչները—չեխերը — սլաւոնական ծագում ունեն, գրաւել են այդ երկիրը մօտաւորապէս 1500 տարի սրանից առաջ և եկել են հիւսիս-արևելքից կամ Լեհաստանի կողմերից։ Նրանց թիւը շատ մեծ չէ, միայն 6—7 միլիոն, որի կէսից քիչ աւելին բնակվում է Չեխիայում, իսկ մնացածը Աւստրիայում, Ունգարիայում, Գերմանիայում, Ամերիկայի Միացեալ-Պետութիւններում, Ռուսաստանում և այլն։ Չեխերի ճնշող մեծամասնութիւնը կաթոլիկներ են, մնացածը բողոքականներ։ Սակայն չեխ կաթոլիկները կոյր մոլեռանդներ չեն և գիտեն ազգութիւնն ու կրօնը միմեանցից զանազանել։ Չեխ բողոքականների մէջ ամենից աւելի յայտնի են Մորավիական եղբայրները, որոնք իրանց գոյութեան ամբողջ ընթացքում ամենափառաւոր աւետարանական մի գործունէութիւն են ցոյց տուել Սառուցեալ օվկիանոսից սկսած մինչև Աֆրիկայի ամենատաք երկիրները։

Չեխերի ազգային կեանքում շատ մեծ նշանակութիւն է ունեցել Պրագայի համալսարանը, որ կենտրոնական Եւրոպայի ամենահին համալսարանն է, հիմնված 1348 թ.։ Պրագայի համալսարանը աշխատում էր ընթանալ Պարիզի և Օքսֆորդի համալսարանների շաւղով և լինել ազատ գիտութեան ազատ օջախ։ Այդ ժամանակ կաթոլիկ եկեղեցին այդ կողմերում միակ տիրապետողն էր և գիտէր իր իշխանութիւնը պաշտպանել հրի և սրի միջոցով։ Իւրաքանչիւր խորհուրդ, գաղափար, կարծիք պիտի անցնէր եկեղեցու հզօր իշխանաւորների քննութեան բովից։ Ազատ մտածելու իրաւունք չը կար։ Ինկվիզիցիան, խարոյկները պատրաստ էին ազատ մտածելու իրաւունք ձգտող ամենախիստ միջոցներով ճնշելու։ Մրլիոնաւոր մարդկանց արիւնն ու մոխիրը անժխտելի վկաներ էին այդ բանի համար։

Սակայն գաղափարի ազատութեան ձգտումը չէր մեռնում. դա նորից և նորից գլուխ էր բարձրացնում և անհամար հոգսեր պատճառում իրանց հաճոյքներին և զեղխութիւններին նուիրված պապերին և կարդինալ-պատրիարքներին։ Այդ ձգտմից Պրագայի համալսարանը աւելի առաջ անցաւ իրան որպէս օրինակ ծառայող միւս համալսարաններից։

Մ. Դերձակեան

# ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—o—

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻԳԼԻՍ

◆ Թերեքի նահանգաշրջանի չեչեն ազգաբնակութիւնը մի հեռագրով իր խորին հպատակութեան զգացումներն էր արտայայտել Թագաւոր Կայսրին. այդ առիթով Թագաւոր Կայսրը փոխարքայի անունով հետևեալ պատասխանն է ուղարկել։

Յանձնարարում եմ ձեզ, կոմս, իմ արտաքին շնորհակալութիւնը յայտնել չեչեն ժողովրդին իր հայրենասիրական բուռն զգացումների արտայայտութեան համար։

◆ Վեհակալ նահանգապետ (նախկին՝ Թիֆլիսի) Ա. Դ. Զիրնեավսկին քաղաքագլխի անունով ուղարկել է հետևեալ հեռագիրը. «Սեծ Իշխան Ալեքսանդր Միխայլովիչը յայտնեց ինձ, որ այն օգնաւը, որ շինվել է իմ հաւաքած նուիրաբերութիւններով և որին իմ միջնորդութեամբ «Թիֆլիս» անունն է դրվել, ուղարկվել է գործող զօրաբանակը։ Լցված բաղդաւորութեան և հպարտութեան զգացումներով, յիշելով մեր աշխատանքը այդ գործի վերաբերմամբ, շտապում եմ իմ զգացումները բաժանել ձեզ հետ և հոգով ցանկալ, որ մեր «Թիֆլիսը», խիզախօրէն գնալով թշնամու վրա՝ հերոսական յաղթութիւններ տանի ի փառս ռուսական զէնքի։ Կեցցէ մեր օգնաւը, կեցցէ Թիֆլիս քաղաքը»։

◆ Մեզ հաղորդում են ստոյգ աղբիւրից, որ Գէորգեան ճեմարանի տեսչական հարցը վերջապէս լուծված է։ Տեսուչ է հրաւիրված Ստ. Մալխասեանց, որ Էջմիածնից վերադառնալով Թիֆլիս՝ զբաղված է ճեմարանի ուսուցչական կազմը լրացնելու գործով։ Դեռ ապատ են ընապատմութեան, գերմաներէնի և ընդհանուր գրականութեան դասերը։

◆ Օգոստոսի 18-ին, պալատական եկեղեցում ներկայութեամբ փոխարքայի, կոմսուհի Ելիզավետա Անդրէեվնայի, փոխարքայի օգնականներ Ա. Զ. Միշլայեվսկիի և հօֆմէյստէր Ն. Լ. Պետերսօնի՝ հոգեհանգիստ կայացաւ փոխարքայի թոռ կոմս Ն. Պ. Շուվալովի մահվան առիթով, որը մեռել է թշնամու հետ եղած կռուում ստացած վէրքից։ [illegible] երիտասարդ։

◆ Նահանգապետը յայտնել է քաղաքագլխին, որ պահեստների ընտանիքների համար պետական գանձարանի յատկացրած նպաստի մի մասը յանձնված է իր կարգադրութեան և քաղ. վարչութիւնը կարող է որևէ դումար վերցնել պահեստների ընտանիքներին բաժանելու։ Երկիր այդ առիթով պահեստների ընտանիքներին խնամող գործակիր յանձնաժողովը եղած խնդրաթերթի համաձայն պատրաստութիւններ տեսաւ իր անդամների միջոցով նպաստները բաժանելու։

◆ Քաղաքային վարչութիւնը արդէն 2000 ր. աւելի նպաստ է յատկացրել պահեստների ընտանիքների կարիքների համար։

◆ Պահեստների ընտանիքներին խնամող քաղաքային յանձնաժողովը ստացել է 3000 խնդրագրեր, որոնցով նպաստ է խնդրվում պետական գանձարանից։

◆ Սիլիֆնիկական երաժշտախմբի դիրեկտոր Ի. Պ. Պալիեվին նահանգապետը թոյլատրել է նոր ակումբում և Թիֆլիսի ժողովարանում համերգներ կազմել Թիֆլիս քաղաքի պահեստների օգտին։

◆ Պատերազմից վնասվածներին օգնող քաղաքային Կենտրոնական Կոմիտէն Օտաս Մաղերից ստացել է 100 ռուբլի։

◆ Քաղաքային վարչութեան մէջ սկսել են անցեալ ընկ. վերջին երկու տարվայ (1912 թ. մարտի 14-ից—1914 թ. մարտի 14-ը) եկ և մուտքի հաշիւը տեսնել, որոշելու համար թէ այդ ձեռնարկութիւնը որքան զուտ արդիւնք է ունենում։ Այդ հաշիւների ստուգութիւնից (անցած երեք տարվանը ստուգված են արդէն) յետոյ վարչութիւնը կորոշի էլեկտրաքարշը գնելու գումարի չափը։ Դրա հետ միասին քաղաքային վարչութիւնը յանձնարարել է քաղաքային ինժ. Սիմոնովսկիին՝ դիտել և քննել այդ ձեռնարկութեան տեխնիկական մասը այսինքն մեքենաները, ճանապարհները, էլեկտրաթելերը և այլն, ու կազմել մի նախահաշիւ այն մանրամասն ծախսերի, որոնք կը հարկաւորվեն էլեկտրաքարշը, մինչև քաղաքի առնելու օրը (1915 թ. մայիս 15), հարկ եղած դրութեան մէջ դնելու։

◆ Թիֆլիսի նահանգապետը իրան ներկայանալ ցանկացողներին, պաշտօնեաներին և խնդրատուներին ընդունում է ամեն օր, բացի հինգշաբթի օրերից, առաւօտեան ժամը 11—12-ը։

◆ «Y. P.» թերթում տպված է մեր հայրենակից անուանի անտեսագէտ Տօսոմեանի յօդուածը «Ճանապարհորդական տարաւորութիւններ Թիւրքիայում» խորագրով։ Յօդուածը այժմեական և հետաքրքրական լինելով՝ կաշխատենք «Մշակի» առաջիկայ համարներից մէկում տալ թարգմանաբար։

◆ Բաղ. վարչութիւնը առաջարկել է ինժ. Զիսլիեվին անմիջապէս ձեռնամուխ լինել Կրուժոկի ձմերային շէնքի աշխատանքներին։ Երեկ արդէն սկսել են քարեայ աշխատանքները։

◆ Ոստիկանապետը դիմել է տեղական բոլոր ակումբների աւագներին, խնդրելով իրան ուղարկել այդ ակումբների կանոնադրութիւնները, որոնք հաստատված են նահանգապետի կողմից։

◆ Թիֆլիսի բօսան երկար ժամանակ է, որ չէ գործում։

—

ԿՈՎԿԱՍ

◆ Եղբ. Իվ. և Դ. Մալիշեվների գործարանները, որ գտնվում են Բօրժոմում, հանքային ջրեր կայարանում, Բատալպաշինսկում և Աստրախանում, իրանց զէնքի կանչված ծառայողների ընտանիքներին վճարում են կէս ամսվայ ռոճիկ և բնակարաններն էլ թողնում են նրանց տրամադրութեան տակ, ինչպէս որ կար։

◆ Գանձակի նահանգի Ելենենդորֆ գերմանական գաղութի յայտնի գինեգործներ եղբ. Ֆօրեր Կարմիր Խաչի օգտին նուիրաբերել են 400 ռուբլի։ Գաղութի բնակիչներ մի քանի դէպքեր կուրութեան։

◆ Բժիշկները Մօսկվայում գտել են, որ «Զրեվնոյ» կոչված սպիրտը և կինդէր-բայլզամ գործածելը աչքի կուրութիւն է առաջ բերում։ Մօսկվայում այդ հողի վրա եղել են մի քանի դէպքեր կուրութեան։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԽԱԲՐԻՆՆԵՐ ԲԱՐԶՐ ՀԱՅԳԻՒՑ

—

Թիւրքական պատերազմական պատրաստութիւնները

I

Էրզրում, 7 օգոստոս

Արդէն ձեզ յայտնի է Թիւրքական ընդհանուր զօրահաւաքը։ Էրզրումի մէջ չնայելով հաւաքուած 60,000 զինուորացուներուն՝ զէնքի տակ կայ ընդամենը 15—16,000 զինուոր, և անոնք բոլորը կը պատկանին 20—31 տարեկանին. 31-էն վեր մնացածները միայն պատերազմական սև աշխատանքն է որ կը տանին այժմ և պիտի տանին ապագային մէջ։ Մնացածներու, այսինքն 31-էն վեր անվարժներու մեծամասնութիւնը այժմ զրաված է Էրզրումի շուրջ նոր շինուող ամրութիւններու սև աշխատանքը տանելով, իսկ փոքրամասնութիւնը եղ արածեցնելով, ձի թիմարելով, արհեստներով և բանակին յատուկ այլ աշխատանքներով։

Այդ աշխատանքներու մէջ ոչ անհատի ընդունակութիւնները աչքի առաջ կառնուին և ոչ ալ ոևէ սիստեմ կայ։ Օրինակ՝ ազգային վարժարաններու ֆրանսերէնի ուսուցիչ Լեոն Գարագաշ 3 օր է որ արևուն տակ եղներ կարածեցնէ, մինչ անդին զիւղացի Մկոն Կարմիր Մահիկի (որ հաւասար է ձեր Կարմիր Խաչին) մէջ կաշխատի։ Գրագրութիւնը կընէ արհեստաւորին մէկը (թիւրք), իսկ արաբաշէութիւն՝ հայ ուսուցիչը։ Մէկ խօսքով, ինչ երկարեցնեմ, կոշկակարը հաց կը թխէ, հացթուխը կօշիկ կը կարէ, ուսուցիչը եզ կարածեցնէ, իսկ եզարածը գրաւոր աշխատանքը կը տանի։ Եւ դեռ կրնանք, թէ մենք բանակ ունինք, մինչև Ռօստով պիտի երթանք։ Մարդուխնդումը կուգայ։

Գանք այժմ մեծամասնութեան՝ անվարժներու կացութեան. նախ անոնք հագուստ չունին, զինուորի չեն նմանիր և ընաւ տարբերութիւն չունին սովորական քաղաքացիէն կամ գիւղացիէն. և դէպքեր շատ են եղած, որ նման զինուորը՝ գործէն փախուստ տալու համար՝ թեին կարմիրը քաշած, այնպէս քնացած է աշխատանքի վայրէն քիչ հեռու. և երբ իշխանաւորը մօտեցած և աշխատանքի կոչած է, ան իրեն ոչ զինուոր յայտարարելով ազատած է աշխատանքէն ու հանդիստ առած։ Երկրորդ՝ հաց չունին. կառավարութիւնը զանոնք աշխատանքի կը տանի, բայց օրուան պաշէնը հայթայթելու հոգը չըներ, այլ կրսէ՝ «Դուք բերէք ձեր հացը և այնպէս աշխատեցէք». և երբ մէկը կուշանայ և կամ աշխատանքի չի գար, անոր համար «ներքացուցիչ դէպք յանցանացը» պատրաստ է. հաց գտնելու է գացած, կամ գժուար է գտած և կամ չգտնելու պատճառով չէ եկած։ Երրորդ՝ բնակարան չունին. կառավարութիւնը անոնց համար կըշա (զօրանոց) չունի և ազատ ձգած է, որ տուն ուներցողը իր տունը քնանայ, իսկ չունեցողը «ՉՂՀԿՆԷՄԻՆ տակը» մնայ. և որովհետև ատանցմէ 95%-ը ժամացոյց չունի, ընդհանուր բօռուի (սիգնալ) զօրահաւաք ձայնն (Զամ բօռուի) ալ քաղաքի ամեն ծայրը չի տարածուիր, որ նշանակուած ժամին բոլորը մէկ տեղ հաւաքուին, ուստի ատանցմէ շատեր կուգան ժամը 9-ին, շատեր 10-ին և մաս մըն ալ նոյն իսկ 12-ին, որովհետև այդ բաղմութիւնը ոչ թէ կանոնաւոր բանակի կը նմանի, այլ չինգեանէներու մէկ հաւաքածուն, ուր ոչ դիսիպլին կայ, ոչ կարգ, ոչ կանոն, ոչ օրէնք և ոչ ալ իրաւունքի ու պարտականութեան ճշդուած սահմաններ...

Այդ իսկ պատճառներով զաբիթը հոգիէն դուրս ելնելով զինուորին «օլան, էշկ օղլու էշէկ» կրսէ, իսկ զինուորը զաբիթին (սպային) «չօք սեոյլէմէ, եթին բիրի» կը պատասխանէ։ Այս վերջին հանգամանքը պերճախօսօրէն կը ճշդէ բանակի մէջ գոյութիւն ունեցող բարեկարգ և նոյն իսկ իդէալական վիճակը։

II

Ինչ կը վերաբերի Էրզրումի շուրջը շինուող ամրութիւններուն, պիտի ըսեմ, որ ոչ մի Զանք կը խնայուի այդ ուղղութեամբ։ Թիւրք կառավարութիւնը բալկանեան պատերազմէն յետոյ հասկցաւ իր հին ամրութիւններուն արժէքը և արդէն ծրագրած էր Էրզրումը ամրութիւններու նոր գոտի ձեռով շրջապատել, բայց հարիւ կուզէր գործի սկսել, որ վրայ հասաւ այս պատերազմը և ծրագրի անմիջապէս, և այն ալ ամենայն արագութեամբ, ի գլուխ հանելը դարձուց ստիպողական անհրաժեշտութիւն և ամենանկենական խնդիր։

Կառավարութիւնը իր տրամադրութեան տակ ունի այժմ աշխատող շատ ձեռքեր, և ան վայրկեան չի կորսնցներ օգտագործելու այդ ձեռքերը՝ ամրութիւններու խնդիրը իրականացած տեսնելու։ Ռուսներու արշաւին բաստիի կողմէ կուրծք տուող Սիվիշէի և Նէրիջի բարձունքները անոյժ են հին ձեով դիմադրելու թշնամիին, որքան ալ որ տիրականօրէն իշխեն Բաստիի դաշտավայրին ու ճամբաներուն վրայ. պէտք է նոր ձեով ամրացնել արծիւներու այդ բոյնը. և ան ոչ միջոց, ոչ ժամանակ և ոչ ալ աշխատող ձեռքեր կը խնայէ այդ հսկաներու համար։

Եթէ այդ ամրութիւնները ռուսին ձեռքն իյնան, անհրաժեշտ է երկրորդ շարքի ամրութիւններու մէջ ապատանիլ. իսկ ատանց մասին այժմ է որ կը մտածէ Թիւրք կառավարութիւնը. և այդ է պատճառը, որ Դէվէ-Բօյնու լեռէն դէպի քաղաք Խաթըմ Փունարիի (Խաթըմի աղբիւր) և Լուսաւորչի վանքի կարմիր խաչ կոչուած վայրէն կանակները նոր ամրութիւններ կը շինէ։ Ապահովելով այս կողմէն թշնամիին մուտքը Էրզրում, ան աչքաթող ու անտես չըներ և այլ ճանապարհներ, ուրկէ կարելի է մտնել քաղաք։

Այդ ճանապարհներէն մէկը, և այն ալ գլխաւորը, Թորթումի ձորն է։ Այդ ձորէն եկող թշնամին կամ ուղղակի Շիֆէկի առջևէն պիտի գայ կիրակոսակ, որ ըսել է՝ Կարնոյ դաշտ, և կամ Քոչք գիւղի մարմանդներէն։ Ուղղակի գալու պարագային՝ Թիւրքը ունի Կարաչէօբէկի հին ամրութիւնը, որ այժմ նոր ամրութիւններով կուժեղացնէ, իսկ Քոչքի հայլաղում ան նոր միայն ամրութիւններ կը շինէ և այն՝ ոչ ուժեղ։

Այդ համբան պաշտպանելու անհրաժեշտութիւնը աւելի ևս զգալի է այժմ, վասն զի թէ Թորթումի ձորին մէջ և թէ Կարնոյ դաշտի բերնին մէջ ապրող ցեղը ոչ թէ թիւրքեր են, այլ հայ մահմեդականներ, որոնք այնքան ալ չեն սիրեր Թիւրք տարրի տիրապետութիւնը, թէև իրենք կրօնով իսլամ և այն ալ խաս իսլամ են։ Անոնց վերաբերմամբ արդէն անցեալ ռուս-թիւրքական պատերազմին Թիւրքը իր հաւատը կորսնցուցած էր, իսկ հիմա ալ աւելի, վասնզի գաղտնիք չէ Թիւրք կառավարութեան համար այն հանգամանքը, որ այժմ ազգային՝ «հայնակ»-ային խմորումը առաջ է եկած այդ տարրին մէջ և որ անոնք իրենց տնտեսական կացութեամբ ալ հակված են երկրի ռուսական գրաւման կողմնակիցներուն։ Այդ ամրութիւնները Թշնամիին ձեռքն իյնալէն ետքը՝ Թիւրքը պիտի քաշուէր Թաֆտայի ամրութիւնը, բայց որովհետև ան ալ յարմար պօզիսիօն չի ներկայացներ, ուստի զայն նոր ամրութիւններով ամրացնելը անօգուտ է նկատուած. կերպի նահանջի պարագային ուղղակի Էրզրում պիտի նահանջեն, առանց ճամբին դիմադրութեան նշան ցոյց տալու։ Նման ամրութիւններ կը կառուցանեն և դաշտի մէջ, «Իլիճէ» կոչուած վայրէն քիչ հեռու, այս ալ Տրապիզոն-Էրզրում տանող խճուղին ապահովելու։

Ա. Կ.

## ԻՆՉ ՏԵՍԱՑ Կ. ՊՕԼՍՈՒՄ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ

—

Յուլիսի 20-ն էր, մի կիրակի օր. երեկոյեան դէմ բարեկամների հետ միասին վերադառնում էինք Կ. Պոլսի ասիական ափից՝ Սկիւտարից, որտեղ գնացել էինք այցելելու Պետրոս Դուրեանի և Ռ. Պէրպէրեանի գերեզմանները, ինչպէս և ուրիշ հաստատութիւններ։

Մեր տրամադրութիւնը բարձրացրած էր ոգեորվելու բաւական նիւթ կար։ Վերջալոյսն էլ Բոսֆորի ափերից մեզ ցուցադրից իր գեղեցկութիւնը։ Մեր նաւը հասաւ Բէշիկթաշ. մենք դուրս ելանք՝ ոտքով շարունակելու ճանապարհը դէպի Պերա։

Շուկայի մէջ, մի խանութի առաջ դրված էր մի մեծ սեղան, որի երեք կողմը նստած էին Թիւրք պաշտօնեաներ և ոստիկաններ, իսկ չորրորդ կողմը յատկացված էր ձիերին։ Հեռուից ոստիկանները ձի էր որ բերում էին, մեծ մասամբ բեռնակիր սայլերի ձիեր, որոնց հետ միասին գլխիկոր առաջ էին գնում նրանց ցնցոտիապատ տէրերը։ Ամէն մի նորեկ ձի արձանագրվելուց յետոյ իր տեղը տալիս էր ուրիշին։

Ի՞նչ էր նշանակում այս. երկիրն անուշտ մի արտակարգ դրութեան մէջ էր։ Հանգստութիւն շատ վայելեցինք. միշտ անշարժ դրութեան մէջ մնալը լաւ չէ, մի քիչ էլ պէտք է կռուելու ձեռնարկել։ Շտապում ենք Պերա հասնել. հասարակութիւնը մայթերի վրայով չի երթևեկում. բոլորը կենտրոնացած են մի տեղում։ Մօտենում եմ նրանց և առաջ անցնում։ Բոլորի հայեացքը ուղղված է պատին փակցված մի կարմրախառն պետական նշանը կրող թղթի վրա. ոչ օր չի խօսում։ Ես կարդում եմ.

«Ընդհանուր զօրահաւաք կայ. զինուոր եղողը օ՞ն, զէնքի տակ. զօրահաւաքը սկսվում է վաղվանից»։

Ինչպէս ասում են՝ մի պաղ ջուր էլ իմ գլխին ածեցին։

*

Հետևեալ օրերը Կ. Պոլիսը կարծէք մի

ուրիշ տեսակ էր երևում. այլևս չը կար առաջվայ հոսուն կեանքը, առաջվայ աղմուկը։ Մի ուրախ դէմքի չէր կարելի հանդիպել. էլեքտրաքարշի, թէ նաւակի մէջ բոլորն անխօս են և մտախոհ, կարծէք ճնշված լինեն մի ինչ-որ ծանրութեան տակ։

Թաքսիմի փողոցը, ուր երեկոները այնքան մեծ բազմութիւն է լինում, այժմ հօսրացել է. նրա սանտարակ և համեղ աղբիւրի բաժանորդները կրճատվել են, այնպէս որ կարելի է գնալ և հանգիստ ջուր խմել։

Նայեցէք ձեր շրջը. ինչքան քիչ երիտասարդներ կան. ինչ, կարծում էք բոլորն էլ գնացե՞լ են իրանց պարտքը կատարելու, կարծում էք զինուոր են գրվել. ա՛չ. նրանցից ոմանք ածիլել են իրանց բեխերն ու միրուքը, ոմանք փախել են, ոմանք էլ թաղնվել։ Գնացէք հիւպատոսարանները, առանձնապէս ռուսականը. ինչքան յոյն, հայ, նոյնիսկ թիւրք զինուորագրուներ պիտի տեսնէք այնտեղ։ Թիւրքիայից փախչելու համար նրանք ոչ մի միջոցի առաջ չեն կանգնում, ռուսական կամաւորներ են գրվում և այդպիսով աղատվում։ Թիւրքին էլ չէ օգնում զօրակոչը. նա գնում է, որովհետև պահանջում են, որովհետև ճարահատ է, աղատվելու միջոց չունի. գնում է՝ անէծք թափելով կառավարութեան գլխին։ Քանի՞ քանի՞ այդպիսիների դանգատներն եմ լսել։ Երբ մի պարիսիա թիւրքի դիտել ուզի թիւրքերի դեռ նոյնիսկ պատերազմը չը սկսված խուսափող դիրք բռնելը, նա ինձ ասաց, որ թիւրքը կոգեորվի միայն այն ժամանակ, երբ նրան ցոյց տան երկրի թշնամին և ասեն. «Ահա սրա դէմ պիտի կռուես, թիւրք զինուոր»։

Ինչպէս որ սպասելի էր, առևտուրը դադարեց. մեծ ֆիրմաները էժանագին վաճառք յայտարարեցին, բայց նորից մնացին անգործ. գործակատարներից որը զինուոր գնաց, որն էլ փախաւ. արհեստաւորներից շատերի խանութները փակվեցին, կինեմատոգրաֆը էժանացաւ։ Մի քանի տրամվայի վագոններ չը գործեցին. ծառայողները զինուոր էին կանչված։

Կենսական մթերքները թանգացան, շաքարի գինը ուղղակի եռապատկվեց. գետնախնձորը, լոբին, նաւթը և այլն կրկնապատիկ թանգացան։ Իսկ հա՞ցը. օ՜հ, հացը անունով քիչ թանդացաւ, բայց իսկապէս միւսներից աւելի հաղուագիւտ դարձաւ։ Դրամը ձեռքումս գնում էի մի փունից միւսը և չէի կարողանում մի հաց առնել. սաստկված դիմում էի խմորեղէնների վաճառատներին, և իմ քսակի համար անթոյլատրելի ծախսեր անում։ Շատ փուռներ փակ են, շատերն էլ՝ բաց, բայց դիմաց ինչպէս. մուրաբն ու պատուհանները գոց են, միայն մի փոքրիկ անցք կայ, որտեղից մի գլուխ միայն կարող է մտնել։ Այդ անցքի մօտ երկու ոստիկաններ կանգնած՝ հաց են տալիս ուզողին, բայց միայն մի հատ երեք ֆունտանոց հաց։ Իսկ ինչքան կը լինեն ուզողները. դաղափար տալու համար այսքանը ասեմ, որ փողոցի այդ կողմից էլ անկարելի էր լինում անցնել, այնքան որ խռնված էին լինում, առաւօտից մինչև երեկոյ. շատերը գալիս երկար սպասում էին և յետոյ ձեռնունայն և յուսակտուր յետ դառնում. դրանց մէջ կան նաև չարաբախտ մէջ փաթաթված թիւրք կանայք, որոնց ամուսինները զինուոր են գնացել։

Գոյութեան կռիւ է. ոչ ոք չէր ուզում դիջել։ Երբեմն փորձում էի առաջ անցնել դէպի փոքրիկ անցքը, բայց ինձ այնպէս էին հրում, որ աչքս բաց էի անում, և ինձ դանում էի նեղ փողոցի միւս ծայրում։ Ինչու Պոլիսը այդպէս թանգացաւ. եկված հացի քանակը սովորականից աւելի էր, ընակիչներն էլ մի օրվայ մէջ յանկարծ շատացել չը դարձան։ Բանը նրանումն է, որ ժողովրդին սարսափեցնում էր սովի ուրուականը։

«Պոլսում ամբարված ալիւրը միայն վեց օր կարող է բաւել»,—գրում էր թերթերից մէկը։ Արտասահմանից նոր եկած ալիւրը և շաքարը յարքունիս էր գրաւվել. առաջիկայում էլ ալիւր և շաքար սպասելը միամտութիւն կը լինէր։ Եթէ իւրաքանչիւր ոք փունից այնքան հաց տանէր, որքան որ իրան պէտք էր, այդպիսի դրութիւն չէր ստեղծվի։ Բայց այդպէս չեղաւ. նախ ամեն մի զինուոր իր դրամով պիտի գնէր իր համար հինգ օրվայ հաց։ Հարուստ քաղաքացին սկսեց իր տանը ալիւր ամբարել, չուներն էլ՝ եվված հաց։ Ինձ պատմում էին, թէ ոստիկանութիւնը մի տան գտել է 65 հատ հաց։

Այս դրութիւնից լաւ օգտվեցին խմորեղէն, խաշած եգիպտացորեն և սիսեռ ծախողները։ Կ. Պոլսի քաղաքային վարչութիւնը ամեն օր նիստեր էր ունենում և պարտադիր կարգադրութիւններ հրատարակում. բայց այդ բոլորը մնում էին միմիայն թղթի վրա։

Փունների նման մէկ էլ պաշարված էին բանկերը, յատկապէս աւստրիական Wiener բանկի բաժանմունքները։ Բոլորը շտապում էին օր առաջ ձեռք ձգել իրանց դրամը. բայց դանձարկղում բաւական դրամ չը կար։ Բանից դուրս էր գալիս, որ Կ. Պոլսում առձեռն դրամ ունեցողների թիւը կարծվածից աւելի մեծ էր. բանկերի դռների մօտ սպասողների թւում կային հաշմանդամներ, մուրացկանի տպաւորութիւն թողնող ծերունիներ, ցնցոտիապատ պառաւներ և այլն։ Բազմաթիւ ոստիկաններ կարգ էին պահպանում. նրանցից ձիաւորները զինված պատրաստ սպասում էին բազմութեան ետևը։ Այստեղի կռիւն էլ նոյն այն ձևով էր կատարվում, ինչ ձևով որ կատարվում էր փունների առաջ, միայն թէ կուռողների արտաքինը ընդհանուր առմամբ աւելի մաքուր էր։ Հեղհեղուկ բոլոր բանկերը փակեցին իրանց գանձարանը դրամատէրերի առաջ։

Կ. Պոլսում պատերազմական վիճակ էր յայտարարված. ցենզուրան չափազանց խստացել էր. հեռագիրները միշտ ի նպաստ գերմանացիների էին խօսում։ Ժողովուրդը վստահութիւն չէր տածում դէպի կառավարութիւնը. աւելի բերանից բերան պտտված լուրերին էին հաւատում, քան թէ հեռագիրներին։ Բայց և այնպէս խմբագիրներն ու հրատարակիչները դրամ էր որ աշխատում էին։ Մի քանի օրաթերթեր օրական մի քանի հրատարակութիւններ էին բաց թողնում, ժողովուրդը ամբողջովին էլ ընթերցասէր էր դարձել։ Որտեղ որ երկու մարդ էիք տեսնում, անպատճառ քաղաքականութիւնից էին խօսում և կարծիքներ փոխանակում։ Նոյն իսկ «Ժամանակ» օրաթերթը, որ իր օրում օրական 4000 օրինակ անգամ լոյս չէր տեսել, 14,000-ի հասաւ։ «Ազատամարտը» անագին վնաս կրեց՝ մի շաբաթ փակվելու դատապարտված լինելուն։ Խմբագիրներ էլ կային, որ դրամ չունէին իրանց թերթի հրատարակութիւնը վերսկսելու. պէտք էր տեսնել, թէ ինչքան ախ ու վախ էին քաշում. ինչպէս ասում են՝ սրտներիցը արիւն էր գնում։ Տարին մէկ Զատիկ, այն էլ նաւակատիք։

Զօրակոչը գնալով խստացաւ. զէնքի տակ կանչվեցին նաև 36—45 տարեկան եղողները առանց ազգի խտրութեան։ Այժմ բոլորն էլ զինուոր էին՝ ուսանող, խմբագիր թէ վարժապետ, փաստաբան թէ բժիշկ, բոլորը։ Հայերի մէջ անհատներ կային, որ արդէն ծերացած էին և 45-ից բարձր, բայց և այնպէս պետական տոմարով նրանք էլ զինուորացու էին։ Բողոք և խնդիր օգուտ չէին անում։

Օտարահպատակներից միայն գերմաններն էին, որ իրանց հանգիստ էին զգում. միւսները, համաձայն իրանց հիւպատոսների տուած ազդերին, խումբ-խումբ հեռանում էին։ Ամենից շատ հեռացան յոյները, ռուսները, ֆրանսիացիները, յետոյ նաև միւսները։ Կ. Պոլսից մեկնող նաւերը ամբողջովին լցված են լինում։ Նոյն իսկ ռուսահպատակ հրէաներ, որ մի քանի ամիս առաջ Օդեսայից տեղափոխվել էին Կ. Պոլիս, գերադաս համարեցին վերադառնալ իրանց հայրենիքը։

Վերջին օրերը մի քանի յոյներ ևս եղան Պոլսում. դրանցից մէկը կազմակերպեցին գերմանացիները իրանց հիւպատոսարանի առաջ՝ խրախուսվելով թիւրք կառավարութիւնից. իսկ միւսը՝ անգլիացիները, ֆրանսիացիները և ռուսները։ Երկրորդ ցոյցի ժամանակ աւելի մեծ խանդավառութիւն էր նկատվում։ Ֆրանսիական նաւը բազմաթիւ կամաւորներ էր տանելու Պոլսից Մարսէլ։ Նաւի կայմերի և չուանների վրա կողքկողքի ծածանվում էին երեք պետութիւնների դրօշակները։ Տախտակամածի վրա, ինչպէս և ծովափում, խռնված էին բազմաթիւ գլխարկաւորներ և ֆէսաւորներ։

Օրկեստրը շատ գեղեցիկ նուագեց երեք պետութիւնների ազգային օրհներգները։ «Կեցցէ Ֆրանսիան, կեցցէ Անգլիան, կեցցէ Ռուսիան» աղաղակները մարդու ականջն էին խլացնում։ Ինչպիսի՞ մեծ նախանձով դիտում էին այս բոլորը այնտեղ հաւաքված թիւրքահպատակները։

Ահա այս դրութեան մէջ էր Պոլիսը, երբ ես «Царь Михайлъ Ѳеодоровичъ» ռուսական նաւը ոտք դրի։ Իսկապէս ես մտադիր չէի այդքան շուտ բաժանվել Պոլսից։ Այդ ծանր օրերին առանց քաշվելու ման էի գալիս Պոլսի փողոցները, առաւօտից մինչև երեկոյ այցելում էի նրա պատահած անկիւնը։

— Անխոհեմութիւն է արածդ, գնա փակվիր սենեակդ, դու թիւրքահպատակ ես, դէմքդ՝ զինուորացուի դէմք. քեզ կը տանեն, ուսումիցդ կը զրկվես։

— Գլխիդ ճարը տես, օր առաջ Ռուսաստան անցիր, թէ չէ ոչ դիտէ՝ քեզ ինչ է սպասում։ Ռուսաստանից պօստ չի գալիս, այստեղ քեզ օգնող ոչ ոք չի լինիլ։

Ահա այսպէս էին ասում իմ ծանօթ բարեկամները, երբ ինձ տեսնում էին փողոցում արկածախնդրի նման ման գալիս։ Ես փոքր առ փոքր ազդվում էի այս խօսքերից. զգում էի, որ առաջվայ համարձակը չեմ. ինչ-որ մի անհանգստութիւն, կասկած, երկիւղ էր բոյն դրել իմ մէջ. կարծէք սպասում էի մի անցանկալի ելքի։ Ես սկսեցի կրճատել իմ երթևեկը. երբ մի ոստիկանի էի հանդիպում, այլևս ուղիղ չէի նայում նրա աչքերին, այլ միշտ խոյս էի տալիս նրա հայեացքից։

Երբեմն ինձ մխիթարում էի և հաշվում զինուոր գնալուս հետ, մտածելով թէ զօրանոցներում էլ մարդիկ են ապրում, գուցէ ինձանից աւելի լաւ պայմանների մէջ մեծացած մարդիկ, ապա նրանք ինչպէս են համբերում։ Բայց հէնց որ պատկերացնում էի Անատոլուից նոր եկած զինուորները, նրանց զգեստը, ննջարանը, կեղտերով և միջատներով հարուստ անկողինը, նրանց կոպիտ բարքերը, կերակուրները, նրանց ուտելու ձևը,—մի սարսուռ էր անցնում ամբողջ մարմնովս. «Չէ, պէտք է փախչել», վճռում էի ես։

Գնացի ռուսաց հիւպատոսարանը. այնտեղ ինձ հիւպատոսի կողմից ասացին, որ նա շատ է ցաւում, բայց թիւրքահպատակ լինելուս՝ ինձ կարող է օգնել և Ռուսաստան ուղարկել միմիայն այն դէպքում, երբ ես նրան ներկայանամ որպէս քաղաքական յանցաւոր։

Ծանօթներս խորհուրդ տուին ինձ գնալ զինուոր արձանագրվել, հանել զինուորի զգեստ և իսկոյն գնալ հիւպատոսարան ապաստանել։

Բայց այս վերջին միջոցին դիմելու կարիք չունեցայ. մի քանի փորձված պարոններ ասում էին, որ ես զուր եմ պատէ պատ ընկնում, ես զինուորացու չեմ, և այս ոչ թէ նրա համար, որ ուսանող եմ, այլ նրա համար, որ պետական տոմարի համաձայն 17 տարեկան եմ, թէև իսկապէս 22 եմ։

Վերցրի իմ թիւրքական ծննդականը և գնացի ներկայացայ անցագրի պաշտօնատիրոջ. նա մի փոքր խօսեց իմ արտաքուստ աւելի տարիքաւոր լինելու մասին, բայց յետոյ սկսեց գրել իմ անցագիրը։

Ռուսաստան գնացող ուրիշ նաւ գտնելու յոյս չունենալով՝ նստեցի վերոյիշեալ նաւը, որը երկու օրից միայն հանեց մեզ Օդեսա. ճանապարհին այցելեց Բուրգազ և Վառնա բոլգարական նաւահանգիստները։

Կանայք էին դարձել Օդեսայի տէրը, ամեն մի գործի գլուխ նրանք էին անցել։ Փողոցներում մի կենդանի շարժում կար. ծաղիկներ էին բաժանում և դրամ հաւաքում զինուորացուների անտէր ընտանիքների համար։ Ինչպիսի՞ ջերմ մասնակցութիւն. ինչքան մեծ հակադրութիւն կար ռուսների ոգեորութեան, պատրաստակամութեան և թիւրքերի յոռետեսութեան ու երկչոտութեան մէջ։

Ս. Ոսկերչեան

*Եալտա, 5 օգոստոսի*

## ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԾԱՆՈՒՄ Է

ՄԵԾ-ՂԱՐԱԲԻԼԻՍԱ, Репортеръ-ին.—Յուլիսի 14-ից ձեր ուղարկած գրութիւնը չէ կարող լոյս տեսնել «Մշակում»։

ՔԵՐԲԻ, Ազիմին.—Շարունակեցէք։ Հաղորդեցէք միմիայն փաստեր, խուսափելով դատողութիւն անելուց։

ՊԵԱՏԻԳՈՐՍԿ, Ցովսէփ Խօջայեանին.—Յուլիսի 12-ին ձեր ուղարկած գրութիւնը, որի մասին յիշեցնում էք, անյարմար է տպագրութեան։

*Խմբագիր-հրատարակիչ՝*
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ


## ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

**Թիֆլիսի Մանթաշեան Առևտրական Դպրոց**

(Բէրուտովսկայա, № 30)

Քննութիւնները օգոստոսի 25-ից ս. թ.։ Դպրոցն ունի այբուբենական բաժանմունք։
(հ. կ.) 746. 5—5

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐԲԱՑԻ

**ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊՐԱՆԸ**

(ԼՈՐԻՍ-ՄԵԼԻՔՈՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)

կատարում է ամեն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագրում է լրագիրներ եւ ամսագիրներ, գրքեր, բրոշիւրներ, բլանկներ, աֆիշաներ, ծրագիրներ, հարսանեկան հրաւիրատոմսեր, այցեքարտեր եւ այլն։

Ընդունվում են տպագրական պատուէրներ հետեւեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէն, վրացերէն, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, արեւելեան լեռնականների բարբառով։ Պատուէրները կատարվում են մաքուր, ճշդօրէն և չափաւոր գներով։ Ընդունվում են նաև շուտափոյթ կատարվելիք պատուէրներ առանձին պայմաններով։

Պատուիրողների ցանկութեան համաձայն, տպարանը պատուէրները կարող է կազմել տալ, կամ բրոշիւրներ շինել, ու այլու յանձնել։

ԵԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՁԱՆԱՁԱՆ ՑԵՍԱԿ ԹՂԹԵՐ ՊՐԻՑՍ-ԿՈՒՐԱՆՏԻ ԳՆԵՐՈՎ։

Տելեֆոն № 67.

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ իրաւունքներով և
ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԱՔԱՐԵԱՆ ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻ

Ընդունել. և լրացուց. քննութ. օգոստ. 26-ից։ Այբուբեն. բաժ. առանց քննութ.։ Պարապմունքները սեպտ. 1-ից. կուրսերում՝ սեպտ. 15-ից։
(կ.հ.) Միխայլովսկի փ. № 36. 779. 10—2

ՀՈՑՍ ՏԵՍԱԻ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է ԲՈԼՈՐ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՆԵՐՈՒՄ
ՄԻ ԽՈՒՄԲ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱԶՄԱԾ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ նոր դասագիրքը

**ՄԵՐ ԴՊՐՈՑԸ**

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԱՄՓՈՓՈՒՄ Է ԻՐ ՄԷՋ

1) Պատկերազարդ ճոխ ընթերցարան. 2) Ուղղագրական ձեռագիր սիստեմատիկ օրինակներ. 3) Իրաւունական մեծադիր պատկերներ. 4) Ժողովրդական բազմաթիւ ասելուներ, հանելուկներ, շուտասելուկներ, բառախաղեր.

ԳԻՆՆ Է 40 ԿՈՊ.

Պահեստը՝ Թիֆլիս, «Դիր» գրավաճառանոցում։ Նոյն տեղը վաճառվում է նաև «ՄԵՐ ԴՊՐՈՑԻ» բարեփոխած առաջին տարին։ (կ.հ.) 783. 4—2

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲ. ՄԻՆԻՍՏՐ. ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՒՆ ԳՏՆՎՈՂ

ԱՌԱՋԻՆ
ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ
Ն. Ռ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

Գոյութիւն ունի 1895 թ.

Հեղինակ առևտրական հաշուապահութեան ձեռնարկի և զանազան մասնագիտական ձեռնարկների։
Տալիս է երկու սեռի անձանց մասնագիտական առևտրական գիտութիւն 4-ԱՄՍԱՅԻՑ ԴԱՍԸՆԹԱՑՔՈՎ ամենօրեայ պարապմունքներով։
Ուսուցիչները բարձր կրթութիւն ստացած մասնագէտներ են, որոնք գործնականապէս և տեսականապէս պատրաստված են ամեն մի առարկայի համար առանձին։
Առանձնատներ տրվում են մինիստրութեան թոյլտուութեամբ։
Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից 1914 թ.։
Խնդրագիրների ընդունելութիւնը օգոստոսի 25-ից, առաւօտեան ժամը 9—11-ը, երեկոյեան 5—7-ը։
Երգերը և կանոնները տրվում և ուղարկվում են ձրիաբար։
Դասընթացքներին կից հատատված են քիչ պատրաստված անձանց համար առանձին պատրաստական և լրացուցիչ դասարաններ ռուսաց լեզուի և թուաբանութեան համար։
Անձամբ և նամակներով դիմել՝ Тифлисъ, Ухредит. Бухг. Курсовъ Н. В. Абраамянъ. Николаевская, 22, Телефонъ 7—44. (հ.հ.կ.) 749. 0—7

ԱՐՇԱԿ ԶԻԼԻՆԿԱՐԵԱՆԻ, ՏԻԳՐԱՆ ՌԱՇՄԱՃԵԱՆԻ և ԱԼԵՔՍԻՊ ԻՍԱՀԱԿԵԱՆԻ
Կազմած

**ԴԱՍԸՆԿԵՐ**

| | | |
|---|---|---|
| ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ Այբբենարան-Ընթերցարան. | Վեցերորդ տիպ, բարեփոխված. | 40 կ. |
| ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ . . . | Հինգերորդ տիպ, բարեփոխված. | 50 կ. |
| ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ . . . | Չորրորդ տիպ, բարեփոխված. | 60 կ. |
| ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ . . . | . . . | 70 կ. |

Ա. Բ. և Գ. տարիները ենթարկված են հիմնական փոփոխութեան. ճոխացված են ծանուցագիր յօդուածներով, պատմելու, շարադրելու եւ նկարելու պատկերներով։

Դիմել «Դիր» գրավաճառանոցին. Երևան՝ «Աբգարատ» և Ցովհաննիսեան գրախանութներին. կազմողներին՝ Երևան, Թեմական Դպրանոց։ (հ.հ.) 760. 6—4

**Թաւրիզի Ա. Ր. Ա. Մ. Ե. Ա. Ն Դպրոցի** համար հարկաւոր է

ա) Ցոլիանեանաւարտ կամ Գայիանեանաւարտ ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ, որ աւանդելու է նկարչութիւն, և բաժանմունքներում էլ թուաբանութիւն ու հայոց լեզու։ Դասերի թիւը 24 ռոճիկ ճանապարհածախսով միասին 300 թուման (մօտ 600 ր.)։

բ) Դիմնազիաւարտ և հայերէն լաւ իմացող ՄԻ ՓՈՐՁԱՒՈՐ ՎԱՐԺՈՒՀԻ ռուսաց լեզուի դասաւանդման համար։ Դասերի թիւը 20, ռոճիկ՝ 300 թուման (600 ր.) ճանապարհածախս՝ 25 ր.։ Ռուսաց լեզուի դասաւանդման համար կարող են դիմել և վերոյիշեալ հայկական դպրոցների ընթացաւարտները, եթէ ունեն և գիմնազիայի աւարտական։ Դիմել մինչև օգոստոսի 25-ը տեսուչ Ա. Տէր-Վարդանեանին։

Թիֆլիս, «Վիկտորիա» հիւրանոց, № 27. 786. 2—2

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ
ԻՆԺԵՆԵՐ
**Տ. Ա. ԲՈՒԴԱՂԵԱՆԻ**

Բաքու, Կրասնովոդսկայա փ., տ. Աան-Իւզբաշեանցի։ Հեռախօս №№ 23-49, 23-50

Առաջարկում է ամբողջ Կովկասի և Պարսկաստանի համար իսկական ԴԻԶԵԼ շարժիչներ (մոտորներ) յայտնի ԿՕԼՕՄԵՆՍԿԻ ընկ. մեքենայագործարանից։

Հօրիզոնական անգլիական շարժիչներ (մոտորներ) «ԿՐՕՍՍԼԷԾ» ընկերութեան մեքենայագործարանից «Դիւրացրած Դիզել» սիստեմի, որ գործ է ածվում նաւթի բոլոր տեսակներով. նաւթի ծախսն է մի ժամում ամեն մի ձիային ½ ֆունտ կամ 200 դրամ։

Գազային շարժիչներ, որոնք բանում են թէ բնական և թէ գեներատորային գազով։

Ջրհան և ջրմուղ մեքենաներ (նասոսներ)։

Ջրի շարժիչներ (տուրբինաներ)։

Սառոյց պատրաստող մեքենաներ «ԴԻՆԱՄՈ» ընկ. գործարանից ամեն տեսակի։

Երկրագործական մեքենաներ՝ լոկոմոբիլներ, ցորեն մաքրող մեքենաներ, տրաքտորներ և այլն յայտնի ամենայն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկերութեան գործարանից։

Մեծ ճանապարհի վրա աշխատելու համար ԱՒՏՈՄՈԲԻԼՆԵՐ նոյն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկերութեան գործարանից։

Վերոյիշեալ տեխնիքական գրասենեակը իր վրա է վերցնում զանազան գործարաններ սարքել և գործի գցել իր միջոցներով՝ ինժեներներով և վարպետներով։

Դիմել՝ Баку, Техническая Контора Т. А. БУДАГЯНЦЪ.

Արտասահմանից՝ Bacou (Russie) Bureau Technique T. A. Boudaguian, Ingénieur.
(հ. կ.) 551. 0—24

ԻՆԺԵՆԵՐ — ԹԻՖԼԻՍ —
**Ի. Ս. ՊՕՆԴՈՅԵՎ**
Ելիզավետինսկայա, 164, անկիւն Բակինսկայա փ.
— օշլէֆոն գրասենեակի № 133 —

Ջրմուղու չուգունէ և ցինկի խողովակներ իր ֆասոնային մասերով։

ԵՐԿԱԹԵ ԳԵՐԱՆՆԵՐ
ԿԱԹՍԱՅԻ ԵՐԿԱԹ
ԱՆԿԻՒՆԱՅԻՆ ԵՐԿԱԹ
ՏԱՆԻՔԻ ԵՐԿԱԹ
(սեւ եւ ցինկով պատած)

ՑԷՄԷՆՏ, ասֆալտ, գուդրոն, կրակի դիմացող աղիւս եւ կաւ, մեխեր, ամեն չափի եւ այլ նիւթեղէն օգնուր. համար։

Շինութիւնների համար աղիւս՝ վակէում գործվող աղիւսի տեսակներ գործարանից։

(7, 14, 21, 28) 34. 33—23


Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный